

1894 208  
P-99

1041

Up to Happy Valley  
yo Sun Foster

тобурчанда

и киргизындың мәжүү.

208

թ-99

յշ

Համաձայն պատուիրանի Աեհափառ  
Հայրապետի ազգիս ընթերցեալ զայս ծեռ-  
նարկ «Քրիստոնէական վարդապետու-  
թեան» չգտի 'ի սմին-ինչ հակառակ ընդ-  
դէմ դաւանութեան Հայաստանեայց առա-  
քելական Ս. եկեղեցւոյ, ուստի չիք արգելք  
տպագրութեան սորին:

1007  
30284 ՚Ի 6 Յուլիսի 1894 ամի ՚ի Ա. Էջմիածին  
Նախագահ Արիստակէս Եպիսկոպոս

Թիւ 101

2001.

2012

## ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

առաջ. Հ Խաղաքական պատրիարք Ամենայն պատրիարքության վեհականությանը պատկանությունը բարձր է գույքությունությամբ (ՅԿ) բարձր է առաջ

ԱՍՏՈՒԱԾԱՀԱՅՈՒՅՆ – ՍՈՒՐԲ ԳԻՒՔ

**Гимн на Денешни - Първи - 9 часове**

Աստուածաշունչ — Սուրբ Գիրքն այն մատեանն է, որ Աստուածային հոգաւ ազդեցութեամբ գրել են Աստծուց ընտրուած սուրբ մարդիկ, որոնք անուանվում են Մարգարէք և Առաքեալք:

Սուրբ Գրքի այն մասը՝ որ գրուեց Քրիստո-  
սից առաջ մարդարէների ձեռքով, անուանվում  
է Հին Կտակարան, իսկ Քրիստոսից լետոյ գը-  
րուածն առաքեալների ձեռքով՝ կոչվում է Նոր  
Կտակարան:

Հին Կտակարանում Աստուած խոստանում է մեզ, որ մարդոց Աղամայ մեղքից, այսինքն յաւիտենական դատավարութունից ազատելու համար կ'ուղարկի իւր Միածին Որդուն. և այս խոստմամբ Աստուած մարդոց սիրտը նախա-

Խատրաստեց օրինակներով ու մարդարէների  
միջոցով խոստացած Փրկչին ընդունելու:

Նոր կտակարանը վկայում է, թէ Աստու-  
ած իրաւի ուղարկեց մարդոց իւր խոստացած  
Աստուածային Փրկիչն, իւր Միածին Որդին,  
որ է Յիսուս Քրիստոս:

Հին կտակարանը պարբռնակում է քառա-  
սուն և 'Հինգ (45) գիրք, իսկ Նոր կտակարանը՝  
քսան և եօթն (27) գիրք:

Նոր կտակարանի այն մասը, որ զրել են  
աւետարանիչները՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս  
և Յովհաննէս, կոչվում է Աւետարան, որովհե-  
տեւ բարութեան և փրկութեան աւետիք են  
պարունակում, այսինքն աւետում են մարդկու-  
թեանն Փրկչիք Գալուստը, Նորա ձեռքով եղած  
գերագոյն բարիքը, Նորա երկրաւոր կեանքի  
պատմութիւնը, Նորա հրաշալի գործերը, Նո-  
րա փրկարար և կենդանաբար վարդապետու-  
թիւնները, վերջապէս Նորա մահը խաչի վե-  
րայ, փառաւոր յարութիւնն և սքանչելի համ-  
բարձումն:

### ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Քրիստոնէական վարդապետութիւնն այն  
ուսումն է, որ ինքն Յիսուս խօսքով և գործով, 1)

ու յետոյ Նորա առաքեալները սովորեցրին մեզ  
մարդոց թէ խօսքով, թէ գրով և թէ գործով 2)  
աշխարհիս վերայ Աստծու կամքի համաձայն  
ապրելու և յաւիտենական կեանքը ժառանգելու  
համար, այսինքն ճանաչել ճշմարիտ Աստծուն,  
հաւատալ նորան, սիրել և կատարել նորա  
պատուիրանները 3):

### ՀԱՒԱՏ

Հաւատն Աստծուց մեզ պարզեած մի  
ներքին շնորհք է, որով կարողանում ենք ճա-  
նաչել, ընդունել և խոստովանել այն Աստուա-  
ծային յայտնութիւնները, այսինքն ճշմարտու-  
թիւնները, որ Աստուած պարզել է մարդոց  
փրկութեան համար:

Մենք պէտք է հաւատանք աստուածային  
յայտնութիւններին հենց այն պատճառով, որ  
նոցա մեզ տուող Աստուած արդար է և ճշմա-  
րիտ:

Հաւատը՝ որ ներքին շնորհք է, քրիստո-  
նեան պարտաւոր է արտայատել գործով և  
խոստովանել բերանով 4):

Քրիստոնէական հաւատոյ հիմն է ինքն  
Յիսուս Քրիստոս, որի միջոցով Աստուած խոս-  
տացաւ փրկել մարդկան ազգը յաւիտենական

Խոատրաստեց օրինակներով ու մարդարէներին  
միջոցով խոստացած Փրկչին ընդունելու:

Նոր կտակարանը վկայում է, թէ Աստու-  
ած իրաւի ուղարկեց մարդոց իւր խոստացած  
Աստուածային Փրկիչն, իւր Միածին Որդին,  
որ է Յիսուս Քրիստոս:

Հին կտակարանը պարբռնակում է քառա-  
սուն և 'հինգ (45) գիրք, իսկ Նոր կտակարանը  
քսան և եօթն (27) գիրք:

Նոր կտակարանի այն մասը, որ գրել են  
աւետարանիշները՝ Մատթէոս, Մարկոս, Ղուկաս  
և Յովհաննէս, կոչվում է Աւետարան, որովհե-  
տեւ բարութեան և փրկութեան աւետիք են  
պարբռնակում, այսինքն աւետում են մարդու-  
թեանն Փրկչի Գալուստը, Նորա Ճեռքով եղած  
գերագոյն բարիքը, Նորա երկրուոր կեանքի  
պատմութիւնը, Նորա հրաշալի գործերը, Նո-  
րա փրկարար և կենդանաբար վարդապետու-  
թիւնները, վերջապէս Նորա մահը խաչի վե-  
րայ, վառաւոր յարութիւնն և սքանչելի համ-  
բարձումն:

ՔՐԻՍՏՈՒԿԱԾ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ

Փրկիստոնէական վարդապետութիւնն այն  
ուսումն է, որ ինքն Յիսուս խօսքով և գործով, 1)

ու յետոյ Նորա առաքեալները սովորեցրին մեզ  
մարդոցս թէ խօսքով, թէ գրով և թէ գործով 2)  
աշխարհիս վերայ Աստծու կամքի համաձայն  
ապրելու և յաւիտենական կեանքը ժառանգելու  
համար, այսինքն ճանաչել ճշմարիտ Աստծուն,  
հաւատալ նորան, սիրել և կատարել նորա  
պատուիրանները 3):

### Հ Ա Խ Ա Տ

Հաւատն Աստծուց մեզ պարզեած մի  
ներքին շնորհք է, որով կարողանում ենք ճա-  
նաչել, ընդունել և խոստովանել այն Աստուա-  
ծային յայտնութիւնները, այսինքն ճշմարտու-  
թիւնները, որ Աստուած պարզեել է մարդոց  
փրկութեան համար:

Մենք պէտք է հաւատանք աստուածային  
յայտնութիւններին հենց այն պատճառով, որ  
նոցա մեզ տուող Աստուած արդար է և ճշմա-  
րիտ:

Հաւատը՝ որ ներքին շնորհք է, քրիստո-  
նեան պարտաւոր է արտայատել գործով և  
խոստովանել բերանով 4):

Քրիստոնէական հաւատոյ հիմն է ինքն  
Յիսուս Քրիստոս, որի միջոցով Աստուած խոս-  
տացաւ փրկել մարդկան ազգը յաւիտենական

դատապարտութիւնից այսինքն Աղամայ մեղքից.  
այս խոստումն Աստուած արեց նախ՝ նախամարդոց,  
նոցա դրախտից արտաքսելու ժամանակ՝ 5)  
յետոյ նահապետներին, Մովսէսին և միւս մարդարէներին 6):

Քրիստոնէական հաւատը կայանում է նոյն  
իսկ Քրիստոսի երկրպագութեան և նորա պատուիրանների կատարման մէջ:

### ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՒԱՏՈՅ ՅԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Քրիստոնեայի հաւատը պէտք է լինի լուսաւոր, հեղ, հաստատ և կենդանի:

ա. Քրիստոնեայի հաւատը լուսաւոր է, երբ նա միշտ ուսումնասիրում է Սուրբ Գիրքն, ուսանում է նորա մէջ եղած աստուածային ճշմարտութիւններն և Աստծուն ու մարդոց վերաբերեալ բոլոր պարտականութիւնները՝ 7):

բ. Քրիստոնեայի հաւատը կը լինի հեղ, երբ սուրբ Գրքի մէջ պարունակած մարդկային մտքին անհասանելի աստուածային խորհրդներին և ճշմարտութիւններին կը հաւատայ հեղութեամբ 8):

գ. Քրիստոնեայի հաւատը հաստատ կը լինի,  
երբ նա ամբարիշտ մարդոց դատողութիւններից,

օրինակներից և գայլժակղելի գործերից չի գայլակղուիլ, անշարժ կրմնայ իւր հաւատալիքի մէջ և աշխարհի նեղութիւնների ու փորձանքների տակ չի ընկճուիլ, այլ կըզօրանայ ինքնիւր հաւատով 9):

դ. Քրիստոնեայի հաւատը կենդանի է, երբ նա ունենում է այն ամեն բարի գործերը, որ պահանջում է մեր հաւատը 10):

### Յ Ա Ս Ո Յ Ա Ր Դ Ի Ւ Ն Ք Ն Ե Ր Ը

Քրիստոնեայն հաւատով նախ՝ մօտենում է Աստծուն և խաղաղութիւն ու արդարութիւն է հաստատում իւր և իւր Արարչի մէջ 11):

Երկրորդ՝ որդեգրվում է հօր Աստծուն 12):  
Երրորդ՝ ստանում է յաւիտենական կեանքը 13):

Չորրորդ՝ բնակեցնում է իւր մէջ Յիսուսին, որ է կատարեալ երջանկութիւն և յաւիտենական կեանքը 14):

Հինգերորդ՝ զօրանում է յաղթող հանդիսանալու աշխարհի և իւր մարդկային չար ձզտումների դէմ 15):

Ե Ա Յ Ո Ւ Տ Ի Ն

## ՄԱՍՆ ԱՐԱՋԻՆ

10. 1. 1900 10. 1. 1900

# S U B U S P

ՀԱՆԳԱՆԱԿ ՀԱՐԱՏՈՅ

Այն բոլոր ճշմարտութիւնները, որոնց  
պէտք է հայ քրիստոնեան հաւատայ՝ բովանդա-  
կած են համառօտակի հաւատոյ հանգանակի  
մէջ, որի աղբէւրը Սուրբ Գիրքն է:

Քրիստոնէութեան սկզբներում հաւատոյ հանդանակը կայանում էր միմիայն հետևեալ խօսքերի մէջ՝ «Յանուն չօր և Որդւոյ և չոգույն սրբոյ», բայց երբ քրիստոնէութեան դէմ մոլար կարծիքներ յայտնուեցան, 325 թուին երեք հարիւր տասն և ութ (318) հայրապետներ մայիսի 20-ին ժողովուելով Նիկիա քաղաքը՝ կազմեցին առաջին տիեզերական ժողովն

Ա. Սուրբ Հոգու ներշնչմամբ ու միաբան հաւանութեամբ դրեցին հետևեալ հաւատալիքը, որ անուանվում է Նիկիական հանգանակ:

1. «Հաւատամք ՚ի մի Աստուած, ՚ի Հայրն  
ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի, երևե-  
լեաց և աներևութից: ամերաց և ամերաց

2. «Եւ ՚ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Ալրդ  
դին Աստուծոյ, Ծնեալն յԱստուծոյ Հօրէ Միա-  
ծին, այսինքն յէռթենէ Հօր. Աստուած յԱս-  
տուծոյ, լոյս ՚ի լուսոյ, Աստուած ճշմարիտ  
յԱստուծոյ ճշմարտէ՝ Ծնունդ և ոչ արարած,  
նոյն ինքն ՚ի բնութենէ Հօր, որով ամենայն  
ինչ եղև յերկինս և ՚ի վերայ երկրի, երևելիք  
և աներևոյթք:

Յ. «Որ յաղագս մեր մարդկան և վասն մերու փրկութեան իջեալ յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Պարհամայ Սրբոյ Կուսէն Հոգւովն սրբով. որով էառ զմարդին, զոգի և զմիտ և զամենայն որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք:

4. «Հարչարեալ, խաչեալ, թաղեալ:

5. «Յերրորդ աւուր յարուցեալ:

6. «Ելեալ՝ ի յերկինս նովին մարմնովն,  
նստաւ ընդ աջմէ չօր:

7. «Գալոց է նովին մարմնովն և փառօք

Հօր, ՚ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ զոյ վախճան:

8. «Հաւատամք և ՚ի սուրբ Հոգին, յանեղն և՝ ՚ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնու և՝ ՚ի մարգարէս և յաւետարանս. որ էջն ՚ի Յորդանան, քարոզեաց զառաքեալն և բնակեցաւ ՚ի սուրբսն:

9. «Հաւատամք և ՚ի մի միայն, ընդհանրական և առաքելական եկեղեցի,

10. «՚ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ՚ի քաւութիւն և՝ ՚ի թողութիւն մեղաց:

11. «՚ի յարութիւն մեռելոց:

12. «՚ի դատաստան յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւն երկնից, և՝ ՚ի կեանս յաւիտենականս»:

Իսկ որք ասենն էր երբեմն, յորժամ ոչ էր Որդի. կամ էր երբեմն՝ յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ թէ՝ յոչէից եղեն, կամ յայսէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զսուրբ Հոգին. և թէ փոփոխելիք են. կամ այլայելիք, զայնպիսիսն նզովէ Կաթողիկէ և առաքելական սուրբ եկեղեցի:

Այս ժողովին հայաստանեայց եկեղեցու ներկայացուցիչն էր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի որդին՝ Սուրբն Արխատակէս, որ վերադառնալով որդին՝ Սուրբն Արխատակէս, որ վերադառնալով իւր հետ բերեց Նիկիական հանգահայաստան իւր հետ բերեց Նիկիական հանգահայական և քսան (20) յօդուածով կանոնները:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ 326 թուին ազգային ժողով գումարեց Վաղարշապատում և այնտեղ կանոններն ու հանգահական ընդունելուց յետոյ՝ վերան աւելացրեց՝

«Իսկ մեք փառաւորեսցուք, որ յառաջքան զյափիտեանս, երկիրպազանելով Սրբոյ Երորդութեանն, և միոյ Աստուծութեանն՝ Հօր Որդութիւնն, և Հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և Որդուոյ և Հոգւոյն սրբոյ, ամէն», որ միայն յաւիտեանս յաւիտենից, ամէն», որ միայն հայաստանեայց եկեղեցու մէջ է կարդացվում:

ՄԻՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԹՈՅ ԵՒ ՍՈՒՐԲ  
ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ

«Հաւատամք ՚ի մի Աստուծած...».

Այս խօսքերով խոստովանում ենք, որ Աստուծած կայ և մի է, ինչպէս որ վկայում է Հոգին սուրբ Մովսէս մարգարէի բերանով՝ «Լուսակայէլ, զի Տէր Աստուծած մեր, Տէր մի է» 16): Խորացէլ, զի Տէր Աստուծած մեր, Տէր մի է» 16): Վակայն Աստծու միութեան մէջ կան

երեք անձն՝ ա. Հայր Աստուած, որ է պատճառ Որդու անձառ և անժամանակ ծննդեան և չոգբոյն սրբոյ անհաս և անժամանակ բղխման. Բ. Որդի Աստուած յաւիտենական ծնունդ չօրից և գ. Հոգին սուրբ յաւիտենական բըղթառումն չօրից: Այս երեք անձնաւորութիւնները կազմում են մի անձառելի միութիւն, որովհետեւ սոքա երեքն էլ մի են և հաւասար բնութեամբ, էութեամբ և աստուածութեամբ՝ 17):

Թէպէտ չին կտակարանի մէջ Աստծու միութիւնը պարզապէս վկայուած է, բայց այդ աստուածալին միութեան մէջ ամենասուրբ երրորդութեան երեք անձանց գոյութիւնը լուսաբանած չէ 18):

Այն ինչ նոր կտակարանի մէջ պարզապէս ասուած է երեք անձանց գոյութիւնը մի Աստուածութեան մէջ, օրինակ, երբ Յիսուս Յորդանան գետում մկրտուեց և դուրս էր գալիս, այն ժամանակ Հոգին սուրբ աղաւնակերպ իջու Նորա վերալ, իսկ Հօր ձայնը լսվում էր՝ 19) «Դա է որդի իմ սիրելի, դմա լուարուք». ուրեմն Որդին մկրտվում էր, Հոգին իշնում էր աղաւնակերպ, Հայրը վկայում էր: Սուրբ Երրորդութեան խորհուրդը նոյնպէս յայտնուեց Քրիստոսի պատառակերպութեան ժամանակ: Քրիստոս իւր աշակերտներին պատուիրեց՝ «Գնացէք

այսուհետև աշակերտեցէք զամենայն հեթանոսս. մկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդու և Հոմկրտեցէք զնոսա յանուն Հօր և Որդու և Հոգուոյն սրբոյ» Մատթ. Իլ 19—20:

ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆՔ ԿԱՄ  
ՍՏՈՐՈԴԵԼԻՔ.

Սուրբ Գիրքն ուսուցանում է մեղ Աստծու կատարելութիւնները, որք են՝ Արարիչ, Ամենակալ, Ամենակարող, Անեղ-ինքնազոյ, Հոգի, Յաւիտենական, Անփոփոխ. Ամենուրեք, Ամենագէտ, Ամենաստես, Ամենասուրբ, Ամենաբարի, Ամենիմաստ:

Այս կատարելութիւններից հանդանակի մէջ յիշուած են Արարիչ և Ամենակալ խօսքերը՝ «Հաւատամք... ՚ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի», որովհետեւ այդ երկու կատարելութիւնների մէջ պարունակվում են և միւս մնացեալներն, օրինակ. խօստովանելով, թէ Աստուած Արարիչ է և Ամենակալ, խօստովանում ենք, որ Նա է Անեղ-ինքնազոյ. որովհետեւ արարածն արարածների պատճառ չէ կարող լինել:

Սուրբ Գրքի մէջ Աստծուն վերագրուած են նոյնպէս մարդու զգայարանքներն, օրինակ, աջ

տեառն, ակն տեառն, ականջ տեառն և այլն. որով մարդոց հասկացնում են Աստծու ամենազօրութիւնը, ամենուրեքութիւնը, ամենագիտութիւնը:

## Սուրբ Երրորդութեան առաջին անձն Հայոց Աստուած

ԱՐԱՐԱԿՈՐԴՈՒԹԻՒՆ

«Հաւատամք... ՚ի Հայոն ամենակալ Արարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևոյթից»:

Այս խօսքերով դաւանում ենք և խոստովանում, թէ ամենասուրբ երրորդութեան անձներից մինը, որ որոշվում է Հայո անունով, իւր ամենակարող Բանիւ և Սուրբ Հոգևով ոչընչեց ստեղծեց բոլոր երկնաւոր և երկրաւոր, երևելի և աներևոյթ արարածները (20).

ա. Աներևոյթ արարածները հրեշտակներն են, որոնք անմարմին, անմահ հոգիներ են, ստեղծուած են Արարչին սպասաւորելու համար. և մարդոց հոգիները:

Հրեշտակները բաժանվում են բարի և չար: Բարի անուանվում են այն հրեշտակները, որոնք անփոփոխ մնացին Աստծուն հնագանդ. սոքաքազմաթիւ են և բաժանվում են ինն դասերի, որոնք են Սերովբէք, Քերովբէք, Աթոռք, Իշխանութիւնք, Պետութիւնք, Զօրութիւնք, Տէրութիւնք, Հրեշտակք և Հրեշտակապետք:

Չար հրեշտակներ—սատանաներ, դեեր և չար ոգիներ՝ նոքա են, որոնք իւրեանց անբարտաւանութեամբ Աստծու դէմ մեղանչելով՝ կորցրին իւրեանց երջանկութիւնն և դատապարտուեցան յաւիտենական պատժի:

բ. Երևելիքն աշխարհն է իւր զանազան տեսակ նիւթական գոյացութիւններով, որ Աստուած ոչնչեց ստեղծեց վեց օրում:

Առաջի օրն ստեղծեց լոյսը: Երկրորդ օրը՝ Հաստատութիւնը (օդ): Երրորդ օրը՝ ջուրը ցամաքից բաժանեց և հրամայեց, որ ցամաքի վերայ աճեն բոյսեր:

Չորրորդ օրն՝ երկնալին մարմիններն—արեգակը, լուսինն և աստղերը:

Հինգերորդ օրն՝ օդում թռչուններն և ջրում ձկները:

Վեցերորդ օրը՝ բոլոր չորքոտանի կենդանիներն և ապա մարդը: Նիւթական աշխարհի բոլոր գոյացութիւն-

ներից գերագոյնն է մարդը, որովհետև Աստուած մարդուն տուել է հոգի և բանականութիւն մտածելու, խորհելու, դատելու և զարդարել է նորան իւր պատկերով, որ հոգու անմահութիւն է, սրբութիւն է:

Թէև մարդու պատուիրանազանցութեամբ աղօտացաւ այդ աստուածացին պատկերը, սակայն իւր Միածին Որդու միջոցով նորոգեց նոյնն և Հարթեց մարդու առաջ փրկութեան ճանապարհը, որ տանում է դէպի յաւիտենական կեանքը, որի համար ստեղծել էր նորան 21):

### ԵՍՏՈՒԱՌԱՅԻՆ ՆԱԽԸՆՆԱՄՈՒԹԻՒՆ

Աստուած աշխարհը ոչնչից ստեղեց վեց օրում և տեսաւ, որ ամեն ինչ բարի է, եօթներորդ օրը հանգստացաւ, այսինքն այլևս բան չստեղծեց, սակայն իւր ստեղծածն անխնամ չժողեց. Կա սկսեց իւր ստեղծածը պահպանել, խնամել (22):

Այսպէս՝ Աստուած իւր նախախնամութեամբ, որ է նորա ամենակարող, ամենիմաստ և բարի ներգործող զօրութիւն, կառավարում է և պահպանում բոլոր արարածներին՝ հոգալով նոցա ամեն պիտոյքն և անխտաբար խնամելով երկրիս վերայ արդարներին և մեղաւորներին:

Այսպիսի նախախնամութեամբ Աստուած կառավարում է և պահպանում իւր եկեղեցին և պիտի պահպանի յաւիտեանս: Եթէ հին և նոր եկեղեցին՝ այնքան հալածանքներին և դժուարութիւններին տանելով, մինչև այսօք դժուարութիւններին տանելով, մինչև այսօք յարատել է, այդ անհերքելի ապացուց է Աստծու յատուկ նախախնամութեան 23):

### Առողջ Երրորդութեան երկրորդ անձն

#### ՈՐԴԻՆ ԵՍՏՈՒԱԾ

«Հաւատամբ և ’ի մի Տէր Յիսուս Քրիստոս, Որդին Աստուծոյ, ծնեալն Աստուծոյ Հօրէ Միածին՝ այսինքն յէռթենէ Հօր. Աստուած Աստուծոյ, լուս ’ի լուսոյ, Աստուած Ճշմարիտ Աստուծոյ ճշմարտէ՝ ծընունդ և ոչ արարած. Նոյն ինքն ’ի ընութենէ հօր, որով ամենայն ինչ

եղև յերկինս և՝ ՚ի վերայ երկրի, երևելիք և. աներևութը:

«Որ յաղագս մեր մարդկան և վասն մերու փրկութեան իջեալ յերկինց՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ՚ի Մարիամայ սրբոյ Կուսէն Հոգւովն սրբով. որով էառ զմարմին, զհոգի և զմիտ և զամենալին որ ինչ է ՚ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք»:

Այս դաւանութեամբ խոստովանում ենք միակ Տէր և Փրկիչ ամենասուրբ երրորդութեան երկրորդ անձն՝ Որդին Աստուած, յաւիտենից առաջ հօրից ծնուած Միածին, այսինքն էակից, արարչակից, համաբուն, համափառ և համազօր Հօր և Սուրբ Հոգուն, ինչպէս լոյսը լուսից բղիսած, ճշմարիտ Աստուած ճշմարիտ Կատծու յաւիտենից առաջ ծնուած և ոչ արարած—ստեղծուած:

Խոստովանում ենք, թէ Որդին Աստուած Հօր և Սուրբ Հոգու կամքով մարդացաւ, ճշշմարտապէս մարդկալին մարմին և բնութիւն առաւ Սուրբ Կոյս Մարիամից։ Եւ որովհետև

Սուրբ Կոյս Մարիամը Յուղայի ցեղիցն և Դաւթի ազգիցն էր, այս պատճառով էլ Աստուած՝ Աստծու Որդին, որ եղաւ մարդ, անուանուեց Որդի Սստծու և որդի մարդոյ 23):

Խոստովանում ենք, թէ Որդին Աստուած, աւետաբեր հրեշտակի խօսքի համաձայն՝ անուանուեց Յիսուս, որ է Փրկիչ, մարդկալին ազգը մեղքից և մահուան դատապարտութիւնից փրկելու համար 24):

Յիսուս անուանվում է և Քրիստոս, Մեսսիա, որ նշանակում է Օծեալ, նախ՝ որովհետև տեսնում էին Նորա վերայ այն բոլոր գործերն և կատարելութիւնները, որոնք գուշակել էին մարդարէները Մեսսիայի մասին, որին սպասում էին անհամբերութեամբ:

Երկրորդ՝ Նորա համար, որ Յիսուս կատարեց իւր կեանքի մէջ մարդարէի, քահանայի և թագաւորի պաշտօնը, որոնք երրայական եկեղեցու օրէնքի համաձայն օծվում էին իւղով. իսկ Յիսուս յաւիտենից օծեալ էր Սուրբ Հոգուց։

Յիսուս մարդարէի պաշտօնն աւելի գերազանցութեամբ կատարեց. քան թէ միւս մարդարէները, որովհետև Նա ուսուցանում էր մարդոց Աստծու կամքը, ցոյց էր տալիս մարդոց բարոյականութեան փրկարար ճանապարհը. Նա

քարոզում էր, որ Աստուած ամեն մինին իւր գործի համեմատ կը հատուցանէ. Նա աստուածային հրաշքներով ապացուցանում էր, որ ինքն առաքեալ է Աստծու 25):

Յիսուս կատարեց քահանայի պաշտօնն աւելի գերազանցութեամբ, քան Ահարօնեան քահանաները, որովհետև նա աստուածաբար թողնում էր մարդոց իւրեանց մեղքերը: Նա իւր կեանքը պատարագեց մարդոց փրկութեան համար սուրբ խաչի սեղանի վերայ. Նա եղաւ նոր ուխտի միջնորդ Աստծու և մարդոց մէջ. Նա երկնքում միշտ բարեխօս է չօր մօտ մեր մեղքերի թողութեան համար:

Յիսուս ոչ թէ երկրաւոր թագաւոր էր, ինչպէս հրէաները կարծում էին, այլ հոգեւոր և երկնաւոր Թագաւոր է բոլոր տիեզերքի, մանաւանդ իւր եկեղեցու, որի հետ յաւիտեան լինել խոստացաւ, և խնամում է ու պահպանում նորան 26):

«Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ՝ ի յերկինս նովին մարմնովն նստաւ ընդաշմէ հօր:

«Գալոց է նովին մարմնովն և փառօք հօր՝ ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեան ոչ գոյ վախճան»:

Այս դաւանութեամբ նախ՝ խոստովանում ենք, թէ Յիսուս իւր ճշմարիտ վարդապետութիւնը մարդոց ուսուցանելուց յետոյ ամենասուրբ երրորդութեան նախասահման տնօրէնութեան համաձայն, կամեցաւ իւր անձը գոհաբերել մարդկային ազգի փրկութեան համար. ուստի կամաւորապէս յանձն առաւ չարչարուել իւր վարդապետութեան հակառակորդներից և, ՚ի լրումն ամեն տեսակ անարգական չարչարանքների՝ բարձրանալ խաչի վերայ մարդկանց մեղքի և մահի դատապարտութիւնից ազատելու համար:

Երկրորդ՝ խոստովանում ենք, թէ Յիսուս խաչի վերայ ճշմարտապէս մեռաւ և թաղուեցգերեզմանում։ Նա իւր անպարտական մագով ջնջեց մեր հակառակութեան կամ թշնամութեան ձեռագիրը 27): Նա մեզ հաշտեցրեց չայր Աստծու հետ և ազատեց յաւիտենական դատապարտութիւնից, այսինքն Ադամայ մեղքից։ Երրորդ՝ խոստովանում ենք, թէ Յիսուս,

իւր և ուրիշ շատ մարգարէների գուշակութիւնների համաձայն՝ իւր թաղման երրորդօրը յարութիւն առաւ։ Նա իւր յարութեամբ հաստատեց մեր ապագայ յարութիւնն և յափետենական կեանքի լոյսը (28):

Զորբորդ՝ խոստովանում ենք, թէ Յիսուս, իւր յարութիւից յետոյ՝ յաճախ երևում էր իւր աշակերտներին և խօսում էր նոյա հետ Աստծու արքայութեան մասին. Նա նրանց տալիս էր պատուէրներ և խոստացաւ ուղարկել Սուրբ Հոգին նրանց զօրացնելու և մխիթարելու համար։ Եւ ապա Յիսուս, քառասներորդ օրը Զիթենեաց սարի վերայ իւր աշակերտներին օրհնելով համբարձուեց երկինքն և չօր աջ կողմը նստաւ, այսինքն Յիսուս՝ բոլոր տնօրինութիւնները կատարելով, նոյն մարմնովն երկինքը վերացաւ և աստուածային փառքը մտաւ, որ յաւիտենից չօրից ունէր (29):

Եւ հինգերորդ՝ խոստովանում ենք, թէ Յիսուս նոյն մարդկային մարմնով և չօր փառքով կրկին գալու է աշխարհ կենդանիներին և մեղաւորներին արդարապէս դատելու մեղաւորներին յաւիտենական պատիժ, արդարներին յաւիտենական երջանկութիւն յատկացնելու և ամենքի վերայ յաւիտենական թագաւորելու (30):

ԱՍՏՈՒԾԱՌԴՐՈՒԽ ՄԵՐԻԵՂՈՒԹԵԱՆ ԴՔՄ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ա. Աստուածորդու մարգեղութեան դէմ եղած մոլորութիւններից առաջինն է Հրէից ազգի մոլորութիւնը, որ Յիսուսին ակնկալեալ Մեսսիան չհամարելով՝ դեռ ևս սպասում է նոր Մեսսիայի գալութեան։

բ. Երկրորդ հերետիկոսն Աստուածորդու մարգեղութեան դէմ եղաւ Աղէքսանդրացի Արիոս յոյն եղէցն, որ Յիսուսին Աստուած և Որդի Աստծու չէր դաւանում, և ոչ հաւասար և համագոյակից չօր և Սուրբ Հոգուն, այլ օտար ոմն և արարած՝ բոլոր արարածներից բարձր կատարելութիւններով, բայց ոչ Աստուած և Արարիչ։ Արիոսը հիմնվում էր Յիսուսի հետեւալ խօսքի վերայ՝ «Հայր իմ մեծ է, քան զիս», այն ինչ այս խօսքը վերաբերում է Յիսուսի մարդկային խօնարհ վիճակին և բնութեանն։

Այս մոլորութիւնը դատապարտեց Նիկոյ տիեզերական սուրբ ժողովը 325 թուին Պալմի 20-ին, որին չայստանեալց եկեղեցու կողմից ներկայ էր Սուրբն Արիստակէսը Սուրբ Գլութոր Լուսաւորչի հաւանութեամբ։ Ժողովը սահմանեց դաւանել Յիսուսին ճշմարիտ Աստուած և Որդի Աստծու համագոյակից և հա-

մարուն Հօր և Սուրբ Հոգուն: Այս ժողովում  
խմբագրուեց հաւատոյ հանգանակը: Սուրբն  
Արիստակէս 20 յօդուածով կանոններ բերեց  
Հայաստան, որ Սուրբն Լուսաւորիչ Յշտին  
Վաղարշապատի ազգային ժողովով ընդունեց:

Գ. Երրորդ հերետիկոսն եղաւ Կ. Պօլսի Յու-  
նաց Նեստոր պատրիարքը, որ ուրանում էր  
Յիսուս Քրիստոսի խսկապէս Աստծու որդի և  
մարդու որդի լինելը, և չէր խոստովանում, թէ  
Յիսուս է ճշմարիտ Աստուած և Որդի Աստծու.  
Յիսուսի մարդկային մարմինը Նորա աստուա-  
ծութեան բնակարանն էր քարոզում, իսկ Սուրբ  
Կոյս Մարիամին դաւանում էր մարդածին և  
ոչ Աստուածածին:

Այս մոլորութիւնը դատապարտեց Եփեսոսի  
տիեզերական սուրբ ժողովը 431 թուին Յու-  
նիսի 22-ին, որտեղ ժողովուած էին 200 հայ-  
քապետ:

Փողովը սահմանեց դաւանել Յիսուս Քրիս-  
տոս մի Որդի Աստծու, իսկ Սուրբ Կոյս Մարի-  
ամին՝ Աստուածածին:

## Սուրբ Երրորդութեան եր- րորդ անձն

### ՍՈՒՐԲԻ ՀՈԳԻՆ

«Հաւատամք և 'ի սուրբ Հոգին,  
յանեղն և 'ի կատարեալն, որ խօսե-  
ցաւ. յօրէնս և 'ի մարդարէս և յաւե-  
տարանս. որ էջն ի Յորդանան, քա-  
րոզեաց զԱռաքեալն և բնակեցաւ 'ի  
սուրբսն»:

Այս դաւանութեամբ նախ՝ մենք խոստովա-  
նում ենք, թէ Սուրբ Հոգին ամենասուրբ Եր-  
րորդութեան երեք անձներից մինն է անժա-  
մանակապէս և անճառապէս Հօրից բղխեալ  
կամ ելեալ 31):

Երկրորդ՝ Սուրբ Հոգուն Անեղ և կատա-  
րեալ ստորագելիները տալով, խոստովանում ենք,  
թէ Սուրբ Հոգին Հօր և Որդու նման կատա-  
րեալ Աստուած է:

Երրորդ՝ խոստովանում ենք, թէ Հոգին  
Սուրբն ունի այն ամեն կատարելութիւններն,

ինչ որ ունին չայըն և Որդին. Նա արարչակից, գործակից է Հօր և Որդուն. Նա ամենազէտ է և այլն 32). «Հոգի Աստուծոյ շրջէր ՚ի վերայ ջրոց». Ֆանդ. ա. 2.

Չորրորդ՝ խոստովանում ենք, թէ սուրբ Հոգին ներշնչեց մարդարէներին և առաքեալ-ներին բերանացի կամ գրաւոր աստուածային յայտնութիւններն և սուրբ Աւետարանը մարդոց ուսուցանելու համար:

Հինգերորդ՝ խոստովանում ենք, թէ մարդարէներն և առաքեալները՝ Սուրբ Հոգու ներշնչմամբ ու շնորհքով զօրացած՝ կարողացան հրաշագործել և զանազան լեզուներով խօսել. որով ապացուցեցին, թէ իւրեանց առաքելութիւնն Աստծուց է և ուսումն երկնալին 33):

Վեցերորդ՝ խոստովանում ենք, թէ Սուրբ Հոգին՝ աղաւնու նման իջնելով Յորդանանում մկրտուող Յիսուսի վերայ, վկայեց Նորա Աստուածորդի լինելը 34):

ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ ԱՍՏՈՒԱԾՈՒ-  
ԹԵԸՆ ԴԿՄ

Սուրբ Հոգու Աստուածութեան դէմ մո-  
լորութիւն յայտնեց Կ. Պօլսի Յունաց պատրի-  
արդ, հոգեմարտն Մակեդոն, որ Սուրբ Հոգու

Աստուածութիւնն և նորա կատարեալ անձնաւո-  
րութիւնն ուրանում էր, ինչպէս որ Արիսու ու-  
րացաւ Որդու Աստուածութիւնն և մշտենջե-  
նաւորութիւնը Հօր հետ քարոզում էր թէ՝  
Հոգին Սուրբ նոցա էութիւնից օտար է և լոկ  
նոցա պաշտօնեալ:

Սորա մոլորութիւնը դատապարտեց Կ. Պօլ-  
սի տիեզերական սուրբ ժողովը 150 հայրապետ-  
ներից բաղկացած, որ 381 թուին Մայիսին  
Մեծն Թէոդոս Կայսեր հրամանով կայացաւ:  
Ժողովը սահմանեց դաւանել Հոգին Սուրբ հա-  
մագոյակից Հօր և Որդուն ու հաւասար նոցա  
երկրպագելի:

Մեր եկեղեցին ընդունում է միայն վերո-  
յիշեալ երեք տիեզերական սուրբ ժողովները:

### ՃՆՈՐՀԱԲԸՆ ՍՈՒԻՐԻ ՀՈԳԻՆ

Ճնորհք անուանվում են այն ամեն ներ-  
քին և արտաքին բարիքներն, որ պարզել է  
և պարզեում է Աստուած հաւատացեալներին:

Ճնորհքն երկու կարգի է բաժանվում ա)  
գերբնական և բ) սովորական:

Գերբնական շնորհքներն անուանվում են  
մարդարէութիւններ և հրաշագործութիւններ,  
որ Աստուած հին ուխտի մէջ պարզեում էր

մարգարէ անունով ընտրուած մարդոց, որոնք  
պէտք է ներկայում ապագայի մէջ լինելիքը  
գուշակէին և խօսքով ու հրաշագործութեամբ  
ժողովրդին դէպի ճշմարիտ Աստուածապաշտու-  
թիւնը հրաւիրէին: Իսկ նոր ուխտի մէջ նոյն  
շնորհքներն Աստուած պարզեց առաքեալնե-  
րին և նոցա հետևողներին, որպէս զի կարո-  
ղանան՝ խաւարի իշխանութեանն յաղթելով՝  
քրիստոնէական ճշմարտութեան լոյսն ընդհա-  
նուր մարդկութեան մէջ տարածել:

Ճնորհքը բաշխում է ամենասուրբ երրոր-  
դութիւնը, որ մատակարարում է սուրբ Հոգու  
միջոցով:

Սովորաբար շնորհքները սուրբ Հոգին  
բաշխում է՝ նախ՝ նոցա, որոնք արժանապէս  
ընդունում են եկեղեցու սուրբ խորհուրդներն.  
Երրորդ՝ նոցա, որոնք հեղութեամբ և աղօթ-  
քով դիմում են նորան և երրորդ՝ նոցա, որոնք  
ընդունուած շնորհքներն արդիւնաւորում են (Յ):

Սովորական շնորհքները, որ սուրբ Հոգին  
մարդոց բաշխում է, սովոր են՝ չաւատ, Յոյս,  
Սէր, չամբերութիւն, Զօրութիւն և Աստուած-  
պաշտական եռանդ, առանց որոնց չենք կա-  
րող կատարել Յիսուսի պատուիրաններն և փր-  
կութեան հասնել, որովհետև մարդս միշտ դէ-  
պի չարն է հակամէտ:

## ԵԿԵՂԵՑԻ

«Հաւատամք և՝ ի մի միայն ընդ-  
հանրական և առաքելական եկեղե-  
ցի.՝ ի մի մկրտութիւն, յապաշխա-  
րութիւն,՝ ի քաւութիւն և՝ ի թողու-  
թիւն մեղաց,՝ ի յարութիւն մեռելոց,  
՝ ի գատաստան յաւիտենից հոգւոց և  
մարմնոց, յարքայութիւն երկնից և՝ ի  
կեանս յաւիտենականս»:

Եկեղեցի բառս Յունարէն Եքլիսիա, նշա-  
նակում է ժողով այն մարդոց, որոնք մի հա-  
ւատով, մի յուսով և մի սիրով հաւատում են  
Աստուածային ճշմարտութիւններին, որով և  
միացած են միմեանց հետ՝ հոգեոր և բարո-  
յական միութեամբ:

Եկեղեցին իւր սկիզբն ունի նախամարդոց  
ժանանակներից, որոնք առաջին անգամ պաշ-  
տեցին Աստծուն և հաստատուն լոյս ունեցան  
խոստացեալ Մեսսիայի փրկութեանը:

Եկեղեցու նպատակը միշտ եղել է մի և  
անփոփոխ, սակայն զանազան ժամանակներում  
ստացել է զանազան անուններ, օրինակ՝ նա-

խամարդոց ժամանակից մինչև Նոյ նահապետն անուանվում է նախնի եկեղեցի, Նոյից մինչև Աբրահամ և Յակովը՝ նահապետական, Յակովը՝ Խրայէլ անուանուելուց յետոյ մինչև Մովսէս մարգարէն՝ խրայէլեան:

Նախնի, նահապետական և խրայէլեան եկեղեցիները Մեսսիայի փրկութեան ակնկալութիւնը պահպանում էին բերանացի աւանդութեամբ, բայց երբ Մովսէս տուեց խրայէլեան եկեղեցուն գրաւոր ծէսեր, արարողութիւններ և դատաստանական օրէնքներ, որոնք Յիսուսով կատարուելիք փրկագործութեան ըստուերական օրինակներն էին, այն ժամանակից Մեսսիայի Գալութեան ակնկալութիւնը պահպանուեց գրաւոր և եկեղեցին անուանուեց Մովսիսական կամ ընդօրինական մինչև Յիսուսի ծնունդն, որ հաստատեց մարդկացին Հոգիների փրկագործութիւնը, քրիստոնէական եկեղեցու հիմքը դնելով:

Քրիստոնէական եկեղեցի բաժանվում է երկուսի՝ նախ՝ անդրանկաց կամ յաղթանակող եկեղեցի, որ է սուրբ Հրեշտակների և հանգուցեալ սրբերի ժողովն՝ երկնքի կայանսւմ (36):

Երկրորդ՝ զինուորեալ եկեղեցի, որ են կենդանի հաւատացեալներ. զինուորեալ է առաջում նորա համար, որովհետեւ հաւատացեալ-

ները սպառազինեալ են սուրբ Հոգու զէնքով աշխարհի փորձութիւներին դիմագրելու և չարի դէմ պատերազմելու համար (37):

Զինուորեալ եկեղեցին բաժանվում է՝ ա) ուսուցանող, որք են առաքեալներ, աւետարանիչներ, քահանաներ և վարդապետներ, ու բ) ուսանող, որ է հաւատացեալ ժողովուրդը:

Եկեղեցու պաշտօնէութիւնը սահմանեց ինքն Յիսուս, առաքելութեան իրաւունքը տալով առաքեալներին և սոքա էլ իւրեանց յաջորդներին (38):

Յիսուս եկեղեցու պաշտօնեաներին յատկացրեց ուսուցանելու և մկրտելու պարտաւորութիւնները (39), այլև իրաւունք տուեց նոյամարդկանց մեղքերը (թողնելու 40):

### ՅԱՏԿՈՒԹԻՒՆՔ ՔՐԻՍՏՈՆԷԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ

Քրիստոնէական եկեղեցին ունի չորս յատկութիւն՝ Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն և Առաքելականութիւն:

Եկեղեցին «մի» է ասկում նորա համար, որ ամեն հաւատացեալները՝ թէև ազգով, լեզուով, ծէսերով, արարողութիւններով և վարչական ձևերով բաժաննուած են միմեանցից,

սակայն իբրև մի մարմին միացած են իւրեանց  
միակ գլխի - Քրիստոսի հետ մի հաւատով, մի  
յուսով և մի սիրով 41):

Եկեղեցին «սուրբ» է ասվում նախ՝ որով-  
հետև ինչպէս որ իւր զլուխն արդար և անա-  
րատ է, այնպէս էլ սուրբ են նորա անդամ-  
ները, որ Քրիստոսի բարոյեական մարմինն են.  
Երկրորդ՝ որովհետև սրբուած են ամեն տեսակ  
մեղքերից մկրտութեան շնորհքով. Երրորդ՝ ո-  
րովհետև սրբութիւն է քարոզում և ազատ է  
անմաքուր, մոլար և սուտ վարդապետութիւն-  
ներից. չորրորդ՝ որովհետև նորա մէջ կատար-  
վում են քրիստոսադիր, սրբարար և շնորհա-  
բաշխ խորհուրդներ 42):

Եկեղեցին «ընդհանրական» կամ յունա-  
րէն «կաթողիկէ» է ասվում նախ՝ որովհետև  
քրիստոնէութիւնը բոլոր աշխարհիս մէջ տա-  
րածուած է և պիտի տարածուի մինչեւ աշ-  
խարհիս վերջը. Երկրորդ՝ նա, դէպի երան  
դիմող ազգերին մկրտում, սրբում, միացնում  
իւր հետ և անխոտիր սիրով ընդունում է իւր  
ծոցի մէջ 43):

Եկեղեցին «առաքելական» է ասվում, ո-  
րովհետև Քրիստոսի քարոզած հաւատը հաս-  
տառուած է առաքեալների գրուածների և  
աւանդութիւնների վերալ 44):

Խ Ո Ր ; Ո Ւ Բ Դ Ք Ե Կ Ե Ղ Ե Ց Ո Ւ

Խորհուրդք եկեղեցու այն ծէսերն ու արա-  
րողութիւններն են անուանվում, որոնք սահ-  
մանուած են Քրիստոսից և եկեղեցու կարգաւոր  
պաշտօնեանների ձեռքով՝ որոշեալ նիւթով և  
ձեռով մատակարարուելով հաւատացեալներին,  
վերջիններիս համար լինում են սուրբ հոգու  
շնորհքն աներևոյթապէս ստանալու միջոցներ։  
Այս սուրբ արարողութիւնները կոչուեցան խոր-  
հուրդ, որովհետև արարողութիւնները տեսանելի  
են, իսկ Աստծու շնորհքն աներևոյթ։ Խոր-  
հուրդներն եօթն են՝ Մկրտութիւն, Դիոշմ, Ա-  
պաշխարութիւն, Հաղորդութիւն, Ամուսնութիւն,  
Վարդ կամ Զեռնադրութիւն և Յծումն կամ  
Այցելութիւն հիւանդաց։

Մ Կ Ր Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Մկրտութիւնն եկեղեցու սրբարար խոր-  
հուրդներից մինն է, որ հաստատեց Յիսուս  
հաւատացեալներին սկզբնական մեղքից մաք-  
րելու և հոգեւոր կեանք պարգևելու համար՝  
«Մկրտեցք զամենայն հեթանոսս յանուն Հօր  
և Որդու և Հոգւոյն սրբոյ». Մատթ. Իլ. 20:  
Մկրտութեան խորհրդի էական բանն է

«...ծառայս Աստուծոյ մկրտի յանուն Հօր և  
Որդոյ և Հոգոյն սրբոյ»:

Մկրտութեան խորհուրդը կատարում են  
եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները: Նիւթը  
ջուրն է, իսկ արտաքին ձևն այն է, որ երե-  
խային ջրի մէջ երեք անգամ ընկղմելով՝ մի  
անգամ ասում են՝ «...ծառայս Աստուծոյ մը-  
կրտի յանուն Հօր և Որդոյ և Հոգոյն սրբոյ»:

Երեք անգամ ընկղմելն օրինակ է Քրիս-  
տոսի մահուան, Թաղման և յարութեան:

Հայաստանեաց եկեղեցին մկրտութիւնը  
համարում է անկրկնելի. սորա համար էլ հան-  
գանակի մէջ դաւանում ենք՝ «Հաւատամք ՚ի  
մի մկրտութիւն»:

### Դ Ռ Ո Ջ Մ

Թրոշմ եկեղեցու սրբարար խորհրդներից  
մինն է, որ հաստատեց Հոգին սուրբ՝ իշխելով  
Յիսուսի վերայ մկրտութեան ժամանակ և ա-  
ռաքեալների վերայ Պենտեկոստէի օրն և նո-  
ցա զօրացրեց իւրեանց դժուարատար պաշտօնի  
մէջ 45):

Առաքեալները դրոշմի խորհուրդը կատա-  
րում էին ձեռք դնելով մկրտուածների վերայ,

որով վերջինները զգալի նշանով և զօրութեամբ  
ընդունում էին հոգին սուրբ 46):

Թրոշմի էական բանն է՝ «Իւղ անոյշ հե-  
ղեալ յանուն Յիսուսի Քրիստոսի կնիք երկ-  
նաւոր պարգևաց»: Նիւթն օրհնած միւռոնն  
է, իսկ արտաքին ձևն է մկրտուածի ճակատն,  
աչքերն, ականջները, քիթը, բերանը, ձեռ-  
քերը, կուրծքը, թիկունքն և ոտները միւռո-  
նով խաչաձև օծելը:

Այս զգալի օծութեան միջոցով մկրտուածն  
ընդունում է սուրբ Հոգու օծութիւնը — շնորհքն  
և զօրութիւնն ու նոյանով պատերազմ մղելով  
աշխարհի և նորա մոլութիւնների դէմ՝ յաղ-  
թող է հանգիսանում:

Հայաստանեաց եկեղեցին այս խորհուրդը  
կատարում է մկրտելուց անմիջապէս յետոյ,  
որովհետեւ Հոգին սուրբն ևս Յիսուսի վերայ  
իջաւ մկրտելուց անմիջապէս յետոյ, նոյնպէս և  
առաքեալները ձեռք էին դնում մկրտուածների  
վերայ նոցա մկրտուելուց անմիջապէս յետոյ:

Մեր եկեղեցին դրոշմի խորհուրդն ան-  
կրկնելի է համարում նոյն իսկ այն պատճա-  
ռով, ինչ պատճառով որ մկրտութիւնը, որով-  
հետեւ դրոշմը մկրտութեան շարունակութիւնն է:

## ԱՊՀ ՃԽԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ապաշխարութիւնն եկեղեցու խորհրդներից մինն է, որով զղացող մեղաւոր հաւատացեալն իւր մեղքերը քահանայի առաջ Աստծու խոստովանելով՝ իւր հաւատի համաձայն քահանայի միջոցով ստանում է Աստծոց իւր ներգործական մեղքերին թողութիւն:

Ապաշխարութեան խորհուրդը հաստատեց ինքն Յիսուս Քրիստոս ասելով՝ «Ոչ եկի կոչել զարդարս, այլ զմեղաւորս յապաշխարութիւն»: Յիսուս Քրիստոս առաքեալներին տուեց մեղքեր թողնելու իրաւունքը (47). «Փչեաց ՚ի նոսա և ասէ, առէք հոգին սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի»: Յով. Ի. 22:

Այս խորհուրդը պէտք է կատարել նախ կատարեալ զղմամբ, երկրորդ՝ անմերի խոստովանութեամբ և երրորդ՝ հաստատապէս յուսալով, որ Յիսուս Քրիստոսի չարչարանքի արդիւնքով անպատճառ թողութիւն կը ստացուի:

## ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

Հաղորդութիւնն եկեղեցու սրբարար խորհրդներից մինն է, որ Յիսուս Քրիստոս իւր Քրկագործ չարչարանքի և մահուան լիշտա-

կի համար սահմանեց Պատեքի տօնի ժամանակ, այսպէս՝ Յիսուս առնում է իւր ձեռքն անխմոր հացը (բաղարջ), օրհնում է և տալիս է իւր աշակերտներին ասելով՝ «Առէք կերայք այս է մարմին իմ» և ապա առնելով բաժակն օրհնում է և տալիս է իւր աշակերտներին ասելով՝ «արբէք ՚ի սմանէ ամենեքեան, այս է արիւն իմ»:

Հաւատացեալը հացի և գինու տեսակով ճաշակելով Յիսուս Քրիստոսի մարմինն և արիւնը միանում է Յիսուսի հետ և ընդունում է յաւիտենական կեանքը (48):

Հաղորդուող հաւատացեալը պէտք է ունենայ նախ՝ սրտով զղումն, երկրորդ՝ հաստատուն հաւատ, երրորդ՝ ջերմ ցանկութիւն Յիսուսին մօտենալու և չորրորդ՝ հաստատ որոշումն այլևս չմեղանչելու: Հակառակ դէպքում հաղորդուող հաւատացեալը դատապարտվում է:

Խորհուրդս մատակարարողներն են եկեղեցու կարգաւոր պաշտօնեաները:

Հաղորդութեան էական բանն է «Առէք, կերայք» և «Արբէք ՚ի սմանէ» խօսքերը: Նիւթըն է անխմոր հաց (բաղարջ) և անապակ գինի. արտաքին ձևն է խորհրդի գործողութիւնը, որ կոչվում է պատարագ:

Հաւատացեալը պարտաւոր է տարուայ մէջ  
մի քանի անգամ հաղորդուիլ:

Ա Մ Ո Ւ Ս Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ամուսնութիւնն եկեղեցու սրբարար խոր-  
հըրդներից մինն է, որ նախ՝ սահմանեց ինքն  
Կստուած դրախտի մէջ օրհնելով նախամարդոց  
միաւորութիւնն ասելով՝ «Ընեցէք և բազմա-  
ցարուք և լցէք զերկիր». Ծննդոց Ա. 28, և  
ապա Յիսուս ամուսնութեան նախկին եղծեալ  
սրբութիւնը, միաւորութիւնն և անլուծանելի  
կապը սրբագործեց և հաստատեց ասելով՝ «Զօր  
Աստուած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ». Մատթ.  
ԺԹ. 27:

Խորհուրդս մատակարարողներն են եկեղե-  
ցու կարգաւոր պաշտօնեաները:

Ամուսնութեան էական բանն է «Առեալ  
զձեռն Եւալի և տուեալ ՚ի յաջն Աղամայ և  
ասէ՝ այս է ոսկը յոսկերաց իմոց և մարմին ՚ի  
մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին, զի յառնէ  
իւրմէ առաւ»: Արտաքին ձևն է առն և կնոջ  
իւրեանց ազատ կամքով միմեանց ձեռք տալլ՝  
որով ներքին կերպով, սրտով, կամքով կազմում  
են մի բարոյական միութիւն և լինում են մի  
անձն:

ԿԱՐԳ ԿԱՄ ԶԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Կարգ կամ Զեռնադրութիւնն եկեղեցու  
սրբարար խորհրդներից մինն է, որ սահմանեց  
ինքն Յիսուս Քրիստոս Զիթենեաց սարի վերայ:  
Նա, իւր համբարձման ժամանակ օրհնելով իւր  
առաքեալներին՝ իրաւունք տուեց նոցա ուսու-  
ցանելու հեթանոսներին, մկրտելու նոցա և  
մարդոց մեղքերին թողութիւն տալու 49):

Հայաստանեաց եկեղեցու օրէնքով այս  
խորհրդին արժանանում են այն անձինքը, ո-  
րոնց բարի վարքի և ուսման մասին վկայում  
է նոցա ընտրող եկեղեցին—ժողովուրդն, և ո-  
րոնք չունին ոչինչ մարմնական արատ:

Այս ընտրեալները՝ նույնական իւրեանց անձն  
Աստծու ծառայութեանը, դիմում են եպիսկո-  
պոսին. վերջինս օրհնում է նոցա, օծում է սուրբ  
Միւոնով և իրաւունք է տալիս Աստծու տանը  
սրբագործութիւն անելու և ժողովրդի հոգեւոր  
պիտույքը մատակարարելու:

Կարգն ունի եօթն աստիճան՝ Պունապա-  
նութիւն, Պարութիւն, Երդմնեցուցութիւն,  
Քահնկալութիւն, Կիսասարկաւագութիւն, Սար-  
կաւագութիւն և Քահանայութիւն:

Եպիսկոպոսն և Կաթողիկոսն ևս ըստ

կարգի քահանայ են, սակայն քահանայից զանազանվում են իւրեանց պաշտօնի և իշխանութեան զերազանցութեամբ:

Կարգի աստիճանը տրվում է եպիսկոպոսից՝ առաջի հինգն աղօթքով, վեցերորդը ձեռնադրութեամբ, իսկ եօթներորդը ձեռնադրութեամբ և օծմամբ:

### ՕՇՈՒՄՆ ԿԱՄ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՀԻՒԱՆԴԱՅ

Օծումն կամ այցելութիւն հիւանդաց ենիեղեցու սրբարար խորհրդներից մինս է, որ սահմանեց ինքն Յիսուս այցելութիւն անելով հարիւրապետի հիւանդ ծառային և Պետրոսի զոքանչին և բժշկելով նոյա 50):

Հայաստանեաց եկեղեցին այս խորհուրդը կատարում է այսպէս՝ քահանան խաչով և աւետարանով գնում է հիւանդի մօտ, կարդում է նորա վերայ սահմանուած աղօթքները, աւետարանները, գրքերը, սաղմոսներն և շարականները:

Հայոց Սաշտոցում այս խորհուրդն անուանվում է «գիշերային ժամ»:

Հիւանդը ջերմեռանդութեամբ խոստովանում է իւր մեղքերը, հաղորդվում Քրիստոսի

սուրբ մարմնուն և արեանն ու ըստ իւր հաւատի ստանում է մեղքերին թողութիւն և ցաւերին թեթևութիւն:

Այս խորհուրդն երբեմն առաքեալները՝ հին ուխտից առած՝ կատարում էին հիւանդին իւղով օծելով, իսկ առաքեալների լաշորդներն և մեր եկեղեցին՝ առաքելական դարից սկսած՝ կատարում են առանց օծման: Քրիստոս ինքը միշտ, իսկ իւր առաքեալները շատ անգամ, նոյն խորհուրդը կատարում էին առանց օծման, որովհետև՝ ինչպէս Սարգիս Ճնորհալին ևս ասում է, «Ոչ եթէ իւղն տայ առողջութիւն հիւանդին, այլ անուն ֆեառն»:

### Հաւատամբ... ՚ի լարութիւն մեռելոց»

Այս դաւանութեամբ խոստովանում ենք, թէ աշխարհի վերջն ամեն ննջեցեալներնի մարմիններն՝ Աստծու հրամանով յարութիւն առնելով, պիտի միաւորուին իւրեանց հոգիների հետ և կենդանի մնացածների հետ միասին պիտի դատուին 51):

Արդարների մարմինները յարութիւնից յետոյ կըլինեն փառաւոր 52), անապական 53), անմահ 54). պայծառ 55):

«Հաւատամբ... ՚ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւն երկնից, և ՚ի կեանս յաւիտենականս»:

Սորանով դաւանում ենք, թէ Յիսուս կըրկին գալու է աշխարհ և արդարազատ քննութեամբ որոշելով արդարներին մեղաւորներից՝ արդարներին տալու է իւր յաւիտենական արքայութիւնն, իսկ մեղաւորներին մատնելու է դժոխքի յաւիտենական տանջանքին 56):

Արքայութիւնը մի այնպիսի մեզ անիմանալի վիճակ է, որի մէջ արդարներն յաւիտեան կը վայելեն Աստծու տեսութիւնը, հրեշտակների և բոլոր սրբերի հետ բնակակից լինելով:

Դժոխքը մի սարսափելի վիճակ է, ուր մեղաւորները պէտք է զրկուին Աստծու տեսութիւնից, յաւիտեան պիտի տանջուին իւրեանց խղճի խայթից և հետևաբար նոքա սպի և խաւարի մէջ կապրին 57):

Այսպէս՝ բոլոր մեր սովորած հաւատալիքները սոքա են՝

1. Գոյութիւն Աստուծոյ
2. Միութիւն Աստուծոյ
3. Կատարելութիւնք կամ Ստորոգելիք

4. Երրորդութիւն Աստուծային անձանց
5. Արարչագործութիւն
6. Նախախնամութիւն Աստուծոյ
7. Մարդեղութիւն Աստուծորդուոյն
8. Միւսանգամ գալուստն Աստուծորդուոյն
9. Իջումն Հոգւոյն սրբոյ ՚ի Յորդանան
10. Եկեղեցի Քրիստոսի և խորհուրդք Նորա
11. Յարութիւն մեռելոց և
12. Վերջին դատաստան:

կան փառքն, որով պիտի փառաւորուենք յա-  
ւիտենական հանդերձեալ կեանքում:

## Ա Դ Օ Թ Ք

## ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

## Յ Ո Յ Ս

Յոյսն աստուածային ներքին շնորհքն է,  
որով քրիստոնեան զօրացած առանց երկմտու-  
թեան սպասում է ստանալ Աստծուց խոստա-  
ցած արդար վարձատրութիւնը կամ պատի-  
ժըն իւր գործերի համաձայն:

Նորա խոստացած բարութիւններն են՝  
յաւիտենական կեանք, հանգիստ և անվախ-  
ճան երանութիւն 57):

Մեր դէպի Աստուած ունեցած յոյսի հիմքն  
այն հաստատուն հաւատն է, թէ Աստուած  
ծայրադոյն բարի է և թէ մենք հրաւիրուած  
ենք երջանկանալ նորանով յաւիտեան՝ թէ այս  
երկրաւոր կեանքում և թէ հանդերձեալում:

Այսպէս, մեր յոյսի առարկան Աստուած է,  
որովհետեւ նա տալիս է մեզ այն շնորհքներն,  
որ իւր Որդու միջոցով խոստացել է մեզ ներ-  
կայ կեանքի մէջ և երկրորդ՝ այն յաւիտենա-

Աստծու հետ խօսելը կոչվում է աղօթք:

Աղօթելով նախ մեր սրտի գոհունակու-  
թիւն ենք յայտնում Աստծուն մեր վայելած  
բարիքների համար. երկրորդ՝ խնդրում ենք  
նորանոր հոգեոր և մարմնաւոր բարիքներ և  
երրորդ՝ փառարանում ենք նորա անունը 58):

Մարդս աղօթքով կարող է մօտենալ Աս-  
տծուն և հաստատուիլ հաւատի և յոյսի մէջ:

Աղօթքը լինում է հրավարակական, որ  
շատ աղօթողների հետ միասին կարդացվում  
է Աստծու տաճարի մէջ 59) և առանձնական,  
որ կատարում է մարդս ինքն առանձին միայ-  
նակ Յիսուսի պատուիրանի համաձայն 60):

Յիսուս մեզ սովորեցրեց այսպէս աղօթել՝  
Հայր մեր որ յերկինս ես. սուրբ  
եղիցի անուն քո. եկեսցէ արքայու-  
թիւն քո. եղիցին կամք քո. որպէս  
յերկինս և յերկրի. գհաց մեր հանա-  
պազորդ տուր մեզ ալսօր. և թող  
մեզ գպարտիս մեր, որպէս և մեք

Թողումք մերոց պարտապանաց. և  
մի' տանիր զմեզ՝ ի փորձութիւն, այլ  
փրկեա զմեզ՝ ի չարէ:

Զի քո է արքալութիւն և գօրու-  
թիւն և փառք լաւիտեանս. ամէն»:  
Մատթ. Զ. 7—13:

Այս աղօթքը կոչվում է տէրունական ա-  
ղօթք և բաժանվում է երեք գլխաւոր մասերի՝  
ա) կոչումն, բ) խնդրուածներ և գ) փառաբա-  
նութիւն:

ա. Կոչումն է.

«Հայր մեր որ լերկինս ես»:

Այս խօսքերով Քրիստոս մեզ սովորեցնում  
է, որ Նստծուն Հայր անուանենք, որովհետեւ  
Նա իւր ողորմութեամբ մեզ քրիստոնեաներիս  
որդի անուանեց. Նա մեզ սիրում է հօր պէս  
և պատրաստ է ամեն բանում մեզ օգնելու:  
Որ լերկինս ես, ասում ենք այն պատճառով,  
որ մեր ուշքն ու միտքն երկրաւոր կեանքից  
վերացնելով՝ հոգեսոր կեանքն աչքի առաջ ու-  
նենանք աղօթելու ժամանակ:

բ. Խնդրուածներն եօթն են

1. Սուրբ Եղիշի անուն քո:

Սորանով մենք խնդրում ենք, որ նա մեզ  
տայ կարողութիւն, շնորհք իւր սուրբ անունը  
մեր մէջ մաքուր, սուրբ պահելու. կարողու-  
թիւն տայ, որ չար գործերից հեռու մնանք:

Եթէ մենք ստախօսութիւնից, իւրաք մատ-  
նելուց, բամբասելուց, ուրիշին ծաղրելուց, հայ-  
հոյելուց և ուրիշ սոցա մնան մեղքերից հե-  
ռու կը մնանք, այն ժամանակ Աստծու ա-  
նունը սուրբ պահած կը լինենք 61):

2. Եկեսցէ արքալութիւն քո:

Սորանով մենք խնդրում ենք, որ Աստ-  
ուած մեզ շնորհք, կարողութիւն տայ, որպէս  
զի մեղքից հեռանանք և նորա արքայութիւնը  
—սրբութիւնը մեր սրտի մէջ բնակի. իսկ եթէ  
մեր սրտի մէջ սրբութիւն կը բնակի, կը նշա-  
նակէ, որ մեր մէջ բնակում է Աստուած, որով-  
հետեւ ինքն Աստուած սրբութիւն է 62):

3. Եղիշին կամք քո, որպէս լեր-  
կինս և լերկրի:

Այս խօսքերով խնդրում ենք, թէ ինչ որ  
մենք գործում ենք և կամ ինչ որ մեզ է պա-  
տահում —այս բոլորը ոչ թէ մեր ցանկացածի  
պէս լինի, այլ ինչպէս որ Գու, Աստուած, կա-  
մենում ես. և յայտնում ենք մեր որդիական  
հնագանդութիւնն այն բոլորն ընդունելու, ինչ

որ նա կը բարեհաճի մեզ տալ, որովհետև ինքն Աստուած գիտէ, թէ մեզ որ ժամանակ ի՞նչ բան է հարկաւոր ու խնդրողին էլ ողորմածաբար տալիս է:

Նաև խնդրում ենք, որ մեզ կարողութիւն տայ իւր կամքն այնպէս կատարել, ինչպէս որ երկնքում հրեշտակներն և արդարները կատարում են 63):

#### 4. Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր:

Այս խօսքերով խնդրում ենք, որ Աստուած մեզ տայ մեր մարմնի համար ամենակարեռը պիտոյք—ուտելիք, խմելիք, հագնելիք, բնակարան, որպէս զի կարողանանք ապրել:

Նաև այս խնդրուածով Քիխտոս մեզ սովորեցնում է, թէ միմիայն այս օրուայ համար հաց խնդրենք և երկրորդ օրուայ համար չմտածենք, այլ Աստծու վերայ լոյս պիտի դնենք, և նա մեզ կը առաջ 64)

#### 5. Եւ թու մեզ զպարտիս մեր, որպէս և մեր թողումը մերոց պարտապանաց:

Այս խօսքերով խնդրում ենք մեր պարտքերը, որ են մեր մեղերը՝ մեզ ներել, ինչպէս

որ մենք մեր դէմ մեղանչողներին ներում ենք: Աստուած մեզ տուել է օրէնք, եթէ այդ օրէնքը, պատուիրանը չենք կատարում, նշանակում է, որ մենք պարտական ենք մնում Աստծուն, այսինք մեղք ենք գործում. եթէ մենք Աստծուց մեր մեղքերի թողութիւն ենք խնդրում, սակայն մեր ընկերներին չենք ներում, այն ժամանակ Աստուած էլ մեզ չենքիլ. աղօթողը պիտի խաղաղ հոգի և սէր ունենայ դէպի իւր ընկերները 65)

#### 6. Եւ մի՛ տանիր զմեզ՝ ի փորձութիւն:

Սորանով խնդրում ենք մեզ հեռու պահել վատ պատահմունքներից, որոնք կարող են մեզ մեղքի մէջ ձգել. նաև խնդրում ենք գործութիւն տալ մեզ փորձանքներին դիմադրելու:

#### 7. Այլ փոկեա՛ զմեզ՝ ի շարէ:

Սորանով խնդրում ենք ազատել մեզ ամեն տեսակ թշուառութիւնից և անարդարութիւնից. Հեռու պահել մեզ վատ մարդիկներից և վատ ճանապարհներից:

Այս եօթն խնդրուածներից միմիայն չորրորդը վերաբերում է մեր մարմնական պիտոյքներին, իսկ մնացեալ վեցը՝ հոգուն: Սորանով Յիսուս մեզ պարզ հասկացնում է, որ մարդու

իւր հոգու փրկութեան համար աւելի պիտի  
մտածէ, մեծ զգուշութիւններ պիտի բանացնէ,  
որպէս զի հոգին չկորցնի:

Դ. Փառաբանութիւն է՝

Զի քո է արքայութիւն և գօրու-  
թիւն և փառք լաւիտեանս. ամէն:

Այս խօսքերով մենք աղօթողներս Աստը-  
ծուն փառաբանում ենք, յայտնում ենք մեր  
շնորհակալութիւնն և յոյսն այն բանի մասին,  
որ Աստուած մեր խնդրուածը կը կատարի. յա-  
յտնում ենք, որ ամեն բարիք Աստծուն է  
պատկանում, նորա իշխանութեան տակն է  
գտանկում այն բոլորն, ինչ որ խնդրում ենք.  
Դու, Աստուած, զօրութիւն ունիս մեր խըն-  
դրուածը տալու և քեզ պատկանում է յաւի-  
տենական փառքը: Ամէն ասելով՝ խոստովանում  
ենք, թէ վերև ասածներն իրաւէ, այդպէս լի-  
նի, — ցոյց է տալիս, որ մենք՝ աղօթելով, Աս-  
տծու վերայ յոյս և հաւատ ունինք:

## ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

### Ս Է Ր

Աստծուն սիրելը մի ներքին շնորհիք է,  
որով առաջնորդվում ենք այս աշխարհումս  
կենցաղավարութիւն Աստծու կամքի համաձայն՝  
այսինքն մեր բոլոր կեանքով Աստծուն  
առւիրութիւլ:

Մեր սիրոյ առարկան Աստուած է, սա-  
կայն Յիսուս Քրիստոս սովորեցրեց մեզ, թէ  
չենք կարող Աստծուն սիրել առանց մեր ըն-  
կերները սիրելու, ուստի և ասաց Նա օրինա-  
կանին «Սիրեսցես զՏէր Աստուած քո յամե-  
նայն սրտէ քումմէ և յամենայն մտաց քոյց.  
Նման սմին սիրեսցես զընկերն քո իբրև զանձն  
քո. յայս երկուս պատուիրանս ամենայն օրէնք  
և մարգարէք կախեալ կան». Մատթ. ԻԲ, ՅՇ.  
Քրիստոնեայի սէրն առ Աստուած կատա-  
րեալ է, երբ նա Աստծու բոլոր պատուիրան-

ները կամ օրէնքները կատարում է անթերի, որովհետև այդ ամենն առաջացած լինելով միւնոյն աղբիւրից հաւասարապէս պարտաւորական են մեզ համար (66):

Քրիստոնեան չէ կարող արդարութիւն ձեռք բերել Աստծու օրէնքները միմիայն արտաքուստ (ինչպէս փարիսեցիները) կատարելով. այլ անկեղծութեամբ ընդունելով աւետարանական ճշմարտութիւններն, այն է հաւատով միանալով Յիսուսի հետ. իսկ հաւատը մեռած է առանց սիրոյ, առանց այն մեծ շնորհի, որ զբեց Յիսուս մեր հոգու մէջ և որ կենդանացնում է մեզ, լուսաւորում և առաջնորդում դէպի յաւիտենական երջանկութիւնը:

### ԱՍՏՈՒԱԺԵՅԻՆ ՕՐԷՆՔԸ

Աստուածային օրէնքները հրամայում են մեզ հեռանալ չարից և բարի գործել:

Աստուածային օրէնքն երկու տեսակ է՝ ա) բնական և բ) յայտնեալ կամ դրաւոր:

Բնական օրէնքն է Աստծու մեր հոգու մէջ դրած իւր ձայնը կամ աղքարարութիւնն, որին ասում ենք խղճմտանք և որ ներսից իմաց է տալիս բարին ու չարը:

Յայտնեալ կամ դրաւոր օրէնքներն են այն կանոնները, որ Աստուած տուեց մեզ գրով և են երկու՝ հին և նոր:

Ա. չին օրէնքները նոքա են, որոնք Աստուած տուեց իսրայէլացւոց ազգին Մովսէս մարգարէի ձեռքով:

Այս օրէնքները բաժանվում են երեք կարգի՝ ա) Արարողական կամ Ծիսական, բ) Պատաստանական և գ) բարոյական:

Արարողական կամ ծիսական այն օրէնքներն են, որոնք Աստուած սահմանեց հին ուխտի մէջ աստուածաշտութեան կարգն ու արարողութիւնները կատարելու ձևերի մասին:

Պատաստանական այն օրէնքներն են, որոնք Աստուած սահմանեց Իսրայէլի որդիներին յանցանքի համաձայն պատժելու:

Թէ արարողական և թէ Պատաստանական օրէնքները քրիստոնեաների համար դադարած են 67:

Իսկ բարոյական օրէնքները, որոնք տասնաբանեալ պատուիրաններն են, կարևոր բացատրութեամբ աւելի պարզուեցան և հաստատուեցան մեզ համար Յիսուս Քրիստոսով՝ 68:

ՏԱՄՆԱԲԱՆԵԱՅ ՊԱՏԳԱՄՆԵՐԸ.

ա. Ես եմ Տէր Աստուած քո և մի՝  
Եղիցին քեզ այլ աստուածք բաց լինէն:

բ. Մի արասցես դու քեզ կուռս  
ըստ ամենալն նմանութեան, որ ինչ լեր-  
կինս 'ի վեր և որ ինչ լերկիր 'ի խոնար:

գ. Մի առնուցուս զանուն Աս-  
տուծոյ քո 'ի վերայ սնօտեաց:

դ. Յիշեա' սրբել զօրն շաբաթու:

ե. Պատուեա' զհալը քո և զմալը.  
զի բարի լինիցի քեզ և երկանա-  
կեաց լիցիս 'ի վերալ երկրի:

զ. Մի' սպանաներ:

է. Մի' շնար:

ը. Մի' գողանար:

թ. Մի' սուտ վկալեր զընկերէ  
քումմէ:

ժ. Մի' ցանկանար տան ընկերի  
քո և մի' ամենալնի որ ինչ նորա իցէ:

ա. Ես եմ Տէր Աստուած քո և  
մի՛ Եղիցին քեզ այլ աստուածք բաց  
լինէն:

Այս խօսքերով Աստուած հրամայում է  
ճանաչել նորան միակ ճշմարիտ Աստուածը,  
հաւատալ նորան, յոյս դնել նորա վերայ, սի-  
րել նորան, վախենալ նորանից, երկրպագա-  
նել և աղօթել նորան:

Արգելում է անաստուածութիւնը, կու-  
պաշտութիւնն, անհաւատութիւնն և լուսա-  
հատութիւնը:

բ. Մի' արասցես դու քեզ կուռս  
ըստ ամենալն նմանութեան, որ ինչ  
լերկինս 'ի վեր և որ ինչ լերկիր  
'ի խոնար:

Վորանով Աստուած մեզ արգելում է նիւ-  
թապաշտութիւն, կեղծաւը աստուածպաշտու-  
թիւն, արբեցութիւն, որկրամոլութիւն, արծա-  
թասիրութիւն... այլ հրամայում է գոցա դէմ  
առաքինութիւն գործել:

շ. Մի' առնուցուս զանուն Աս-  
տուծոյ քո 'ի վերայ սնօտեաց:

Այս խօսքերով Աստուած հրամայում է,

որ մեր խօսակցութիւնների մէջ Աստծու անունն երկիւզով լիշենք. նորա անունով միմիայն ճշմարիտ գործերի համար երդուենք և այն էլ շատ կարևոր ժամանակ:

Արգելում է Աստծու անունն ամեն բանի համար թեթևամտութեամբ լիշել, առանց հարկաւորութեան երդուել Աստծու անունով, կեղծաւորութեամբ աղօթել, եկեղեցու մէջ խօսել կամ ծիծաղել...

Դ. Յիշեա' սրբել զօրն շաբաթու:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է կիւրակէ և տօն օրերը պահել, առանց ծուլանալու եկեղեցի գնալ և այնտեղ Աստծուն աղօթել, ամբողջ օրը բարի գործերին նուիրել, սուրբ գիրքը կարդալ, խղձմտանքը քննել և գործած սխալանքը զղջալ. աշխատել մեր նմաններին բարութիւն անել, աղքատներին ողորմութիւն տալ, հիւանդներին այցելել, վատ գործերից հեռանալ, մարմնաւոր աշխատութիւնը դադարեցնել, ալսինքն առևտուրը, վարուցանքն, արհեստը...

### Տ Օ Ւ Ե Ր.

Տօները նույրուած են ֆիսուսին, Աստուածածնին, Սրբոց և Երկնալին զօրաց: Այս պատ-

մառով էլ տօները լինում են Տէրունական, Աստուածածնի և սրբոց. սոցանից մի քանիսը անշարժ տօներ են, իսկ մի քանիսն էլ շարժական:

Անշարժ կոչվում են այն տօները, որոնք ամեն տարի միենոյն ամսաթուին են լինում: Ճարժական կոչվում են այն տօները, որոնք որոշեալ ամսաթուեր չեն ունենում, որովհետև Զատիկն ամեն տարի միենոյն ամսաթուին չեն պատահում, և որովհետև տօներից մեծ մասը կախումն ունին Զատկից, այս պատճառով տօներն էլ շարժական են:

Անշարժ տօներն են՝ Աւետումն (7-ին ապրիլ), Ֆնունդ և Մկրտութիւն Քրիստոսի (6-ին յունվարի), Տեառնընդառաջ (14-ին փետրվ.): Յղութիւն Աստուածածնի (9-ին դեկտ.), Մընունդ Աստուածածնի (8-ին սեպտ.), ՚ի Տաճար Ընծայումն Աստուածածնի (21-ին նոյեմբ. ), իսկ մնացեալ թէ տէրունական և թէ սրբոց տօները շարժական են:

Տէրունական տօներն են՝ Սւետումն, Աստուածայաւտնութիւն, Թլփատութիւն, Տեառնընդառաջ, Ֆաղկազարդ, Զատիկ կամ Պասեք, Համբարձումն, Հոգեգալուստ, Վարդավառ—Պայծառակերպութիւն Քրիստոսի և Ս. Խաչ: Աստուածածնի տօներն են՝ Վերափոխումն,

Յղութիւն ՚ի յԱննալէ, Ծնսւնդ, Երից ամաց  
ընծայումն ՚ի Տաճար:

Սրբոց տօներն են՝ Թաղէսսի և Բարդու-  
ղիմէսսի երկու տօները, Լուսաւորիչի երեք տօ-  
ները, Հրեշտակապետաց, Ամենայն սրբոց, Ա.  
Էջմիածնի տօն (Եկեղեցու տօն), ո. Թարգ-  
մանչաց — ո. Սահակի և ո. Մեսրոպի, Արգար  
և Տրդատ թագաւորների, Ա. Ղևոնդեանց և  
Ա. Վարդանանց տօները, Նաև երեք տիեզերա-  
կան ո. Ժողովների տօներն և այլն:

Ե. Պատուեա՝ զհալր քո և զմալր,  
զի բարի լինիցի քեզ և երկայնա-  
կեաց լիցիս ՚ի վերաս երկրի:

Այս պատուիրանով Աստուած հրամայում  
է սրտով և գործով պատուել, սիրել, հնազան-  
դուիլ, ծառայել և ոչ մի բանով չանպատուել  
մեր ծնողներին, մեր մեծամեծներին, Եկեղեցա-  
կան հովիւներին, բարերարներին, ուսուցիչնե-  
րին և առհասարակ այն բոլոր անձանց, որոնք  
մեր բարիքների համար աշխատում են:

Արգելում է անհնագանդութիւն, օրինա-  
գանցութիւն, ապստամբութիւն, ապերախտու-  
թիւն....

զ. Մի՛ սպանաներ:

Այս խօսքերով Աստուած արգելում է, որ  
մարդս իրան կամ ուրիշին սպանի գործիքով  
և թէ խօսքով. արգելում է ուրիշի կամ իր  
մահը ցանկալ և կամ նապաստել այդ բանին.  
արգելում է ատել, նախատել, մատնել, կուտել,  
ընկերին վատարանել կամ բամբասել, ընկեր-  
ներին գալիքակղեցնել վատ օրինակներով....:

է. Մի՛ շնար:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է  
մաքուր լինել. արգելում է սրտի չար ցանկու-  
թիւններ, չար մտածմունքն, իւր վատ բովան-  
դակութեամբ խօսակցութիւններն և երգերը....:

լ. Մի՛ գողանար:

Սորանով Աստուած արգելում է ամեն տե-  
սակ գողութիւն և յափշտակութիւն, արծա-  
թասիրութիւն, վաճառականութեան մէջ խա-  
բէութիւն, կշռքի և չափի մէջ խարդախու-  
թիւն, աղքատներին զրկել, մշակների և ծա-  
ռաների վարձը կտրել, պարտքը չվճարել,  
պահտուածն լետ չդարձնել....:

Հրամայում է ամեն բանի մէջ ճշմարտու-  
թիւն, արդարութիւն ունենալ:

թ. Մի՛ սուտ վկայե՛ր զընկերէ

քումմէ:

Սորանով Աստուած արգելում է ամեն տեսակ ստախօսութիւն թէ ատենի առաջ և թէ հասարակութեան մէջ. արգելում է վատաքանել, չարախօսել, բամբասել, անարժաններին դովել:

Հրամայում է ճշմարտախօս լինել, ամեն տեղ և ամեն ժամանակ ասել «այո՞ այո. և ոչն ոչ»:

Ժ. Մի՛ ցանկանար տան ընկերի քո և մի՛ ամենայնի որ ինչ նորա իցէ:

Այս պատուիրանով Աստուած հրամայում է մեր ընկերների վերայ չունենալ չար աչք, չար ցանկութիւն. մեր ընկերների թէ ներքին և թէ արտաքին լաւ կողմերի վերայ չնախանձել, ընկերներից ոչ մի բան չյափշտակել, այլ Աստուած ինչ որ մեզ տուել է, նորանով էլ բաւականանալ. ուրիշներին չըվնասել, մի խօսքով հրամայում է մեր ընկերներին ճշմարտութեամբ սիրել ու բարի անել:

Ն Ո Ր Օ Ր Կ Ն Ք.

Բ. Նոր օրէնքները Յիսուսից մեզ աւանդած վարդապետութիւններն են, որոնք առաքեալների և սոցա հետևողների միջոցով աւանդուեցան մեզ:

Նոր օրէնքը հիմնուած է հետևեալ մկրդրունքի վերայ՝ «Զամենայն զոր միանգամ կամիջիք, թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս արարէք և դուք նոցա». Պատթ. ի. 12:

Նա հրամայում է ապաշխարել մեր մեղքերն, առանց որի մեղաւորին փրկութիւն չըկայ, անձնատուր չլինել աշխարհի անցաւոր փառքերին և վայելչութիւններին, ներիլ միմեանց, ողորմել աղքատներին. սիրել Աստուածուն ամենայն անձնուիրութեամբ, սիրել ընկերին իւր անձի պէս, լինել մարդասէր և բարեացակամ ամենքի համար:

Քրիստոսի բարոյական վարդապետութիւնը համառօտուած է ինն երանութիւնների մէջ:

Ա. Երանի աղքատաց հոգւով, զի նոցա է արքայութիւն երկնից:

Բ. Երանի սգաւորաց, զի նոքա մխիթարեացին:

Գ. Երանի հեղոց, զի նոքա ժառանգեսցեն զերկիր:

Դ. Երանի որ քաղցեալ և ծառաւի իցեն արդարութեան, զի նոքա յագեսցին:

Ե. Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն:

Զ. Երանի այնոցիկ, որ սուրբ են սրտիւք, զի նոքա զԱստուած տեսցեն:

Է. Երանի խաղաղարարաց, զի նոքա որդիք Աստուծու կոչեսցին:

Ը. Երանի որ հալածեալ իցեն վասն արդարութեան, զի նոցա է արքալութիւն երկնից:

Թ. Երանի է ձեզ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն և ասիցեն զամենայն բան չար զձէնջ սուտ վասն իմ. ցնծացէք և ուրախ երուք, զի վարձք ձեր բազում են յերկինս: (Մատթ. Ե. 3—12):

Մ Ե Ղ Ք.

Մեղքն է անհնազանդ լինել Աստծու հրամաններին կամ խղմտանքի հակառակ գործել 69:

Մեղքի հետևանքը մահ և դատապարտութիւն եղաւ 70:

Մեղքը լինում է սկզբնական և ներգործական:

Սկզբնական այն մեղքն է, որ մեր նախամարդիկ իւրեանց անհնազանդութեամբ գործեցին, որին ենթակայ են մարդիկ մինչև յանուն Յիսուսի կամ ամենասուրբ երրորդութեան մկրտուիլն:

Ներգործական այն մեղքն է, որ մարդս գործում է մկրտութիւնից յետոյ:

Ներգարծական մեղքը լինում է թեթև ու մահուչափ:

Թեթև այն մեղքն է: որ մարդս ակամայ, անգիտութեամբ կամ մարդկային տկարութիւնից ստիպուած գործում է 71:

Մահացու այն մեղքն է, որ մարդս գործում է զիտութեամբ իւր և իւր ընկերներին վնասելս նպատակով, որով զրկվում է արդար և յաւիտենական երջանկութիւնից և Աստծու հետ հաղորդակցութիւնից:

Մահացու մեղքերն եօթն են՝ չպարտութիւն, Նախանձ, Բարկութիւն, Ֆուլութիւն, Ագահութիւն, Որկրամոլութիւն և Բղջախոհութիւն:

1. Հպարտութիւնն է չար ախտ, որով մարդ իւր անձն ընկերներից գերազանց է համարում և այն ամեն բարիքը կամ շնորհքն, որ ունի, ոչ Աստծուց, այլ իւր անձի ընդունակութիւնից առաջացած է կարծում:

Սորա հակառակ առաքինութիւնն է խոնարհութիւնն, որով մարդ իւր անձն ամեն բանով հաւասար է համարում իւր ընկերին և ամենայն հեղութեամբ վերաբերվում է դէպի իւր ընկերը:

2. Նախանձը մի վատթար կիրք է, որով մարդ ցաւում է և տիրում ընկերի լաւութեան և յաջողութեան համար և ուրախանում է նորա անբաղդութեան ու անյաջողութեան վերայ:

Նախանձի հակառակ առաքինութիւնն է ընկերասիրութիւնն, որով մարդ ընկերի յաջողութիւնն և ձախորդութիւնն իրանն է համարում ու ցանկանում է նորա համար այն, ինչ որ ցանկանում է իւր համար:

3. Բարկութիւնն է վնասակար հոգեկան յուզմունք, որով մարդ չկարողանալով տանել մէկից կրած նեղութիւնները կամ պակասու-

թիւնները կատաղի վրէ ժխնդրութեան ոգով է վերաբերվում դէպի նա: Բարկութեան հակառակ առաքինութիւնն է երկայնմտութիւնն, որով մարդ համբերատար ոգով տանում է զուր տեղից կրած նեղութիւններն և պակասութիւնները:

4. Ֆուլութիւնն է վնասակար ախտ, որով մարդ իւր անձնական հանգստութիւնը պաշտելով զլանում է կատարել իւր պարտաւորութիւնները:

Սորա հակառակ առաքինութիւնն է արիութիւնն, որով մարդ ոգևորուած միշտ աշխատում է կատարել իւր պարտաւորութիւններն անթերի և միշտ պատրաստ և զգոյշ է պատահելի վտանգներից:

5. Ագահութիւնն է մի ախտ, որով մարդ թէ արդար և թէ անարդար ճանապարհներով յափշտակում է ընկերի սեպհականութիւնը, յափշտակում է ընկերի սեպհական համար անում միշտ աւելացնել իւր սեպհական այն է աշխարհային հարըսկանութիւններն՝ այն է աշխարհային հարըսկանութիւններն առանց նոցանից բաժին հանելու բարեգործութիւնների համար:

Սորա հակառակ առաքինութիւնն է ողորմածութիւնն, որով մարդ դրդուած իւր արդար վաստակից օգնում է կարօտեալներին և աղ-

քատներին ու բաժին է հանում աստուածա-  
հանոյ գործերին:

6. Որկրամոլութիւնն է մի վնասակար  
ախտ, որով մարդ անչափաւորութիւն է պահ-  
պանում ուտելիքի և ըմպելիքի մէջ, որ աս-  
վում է որովայնամոլութիւն:

Սորա հակառակ առաքինութիւնն է ժուժ-  
կալութիւնն, որով մարդ չափաւորութիւն է  
պահում ուտելիքի, ըմպելիքի և ամենայն ա-  
խորժելի բաների մէջ:

7. Բղջախոհութիւնն է մի վնասակար  
ախտ, որով մարդ անձնատուր է լինում ա-  
նարդ կրքերին ու ցանկութիւններին:

Սորա հակառակ առաքինութիւնն է ող-  
ջախոհութիւնն, որով մարդս ազատ է պահում  
սիրտը վնասակար մտածնունքներից և իւր ան-  
ձը հեռու է պահում գայթակղեցուցիչ պատ-  
ճառներից:

Երրորդ ողջախոհութիւնն է անհամար-  
թիւ անցնելու ժամանակակից անհամար-  
թիւ անցնելու ժամանակակից անհամար-

## ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Զոր սկսաւ Յիսուս առնել և ուսուցանել:  
Գործք, Ը. 1.

2. Գնացէք, այսուհետև աշակերտեցէք զա-  
մենայն հեթանոսս, ուսուցէք նոյա պահել զամենայն.  
զոր ինչ պատուիրեցի ձեզ: Մատթ. Խ, 19—20.

Հաստատուն կացէք, և պինդ կալարուք զա-  
ւանդութիւնսն, զոր ուսարուք եթէ բանիւ և եթէ  
թղթով մերով: ա. Թեսաղ. Բ. 14.

3. Որ զբանն իմ լսէ և հաւատաց այնմ, որ  
առաքեցն զիս, ընդունի զկեանս յաւիտենականս:  
Յով. Ե. 24.

Եյս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն  
զքեզ միայն ճշմարիտ Աստուած, և որ առաքեցեր  
դՅիսու Քրիստոս: Յով. Փէ. 3.

4. Ոչ ամենայն, որ ասէ ցիս Տէր, Տէր, մտցէ  
յարքայութիւն երկնեց, այլ որ առնէ զկամն հօր ի-  
մոյ, որ յերկինս է: Մատթ. Ե, 21.

5. Եւ եղից թշնամութիւն ՚ի մէջ քո և ՚ի մէջ  
կնոջդ, և ՚ի մէջ զաւակի քո, և ՚ի մէջ զաւակի  
դորա. Նա սպասեցէ քում զիլոյ, և դու սպասե-  
ցես նորա գարշապարի: Ծննդ. Գ, 15.

6. Բազում մասամբք և բագում օրինակօք

կանխաւ խօսեցաւ Աստուած ընդ հարս մեր մարզա  
բէիւք, 'ի վախճան աւուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ  
մեզ Որդւովն: Եթր. Ա. 1—2:

7. Քննեցէք զգիրս, զի դուք համարիք նոքօք  
ունիլ զկեանս յաւիտենականս: Յով. Ե. 39:

8. Հաւատացի զոր և խօսեցայ, և ես խոնարհ  
եղէ յոյժ: Սաղմ. Ճիշ:

9. Արմատացեալք և շինեալք 'ի նա, և հաս-  
տատեալք 'ի հաւատս, որպէս ուսաչքն: Պօղոս Կող.  
Բ. 7:

10. Զինչ օգուտ իցէ, եղբարք իմ սիրեցեալք,  
եթէ ասիցէ ոք հաւատս ունիլ և գործս ոչ ունիցի.  
միթէ հաւատք առանց գործոց ապրեցուցանն զնա...  
հաւատք առանց գործոց մեռեալ է: Յակ. Բ. 14—29:

11. Խըսուհետե արդարացեալք 'ի հաւատոց  
զիսաղաղութիւն կալցուք առ Աստուած 'ի ձեռն  
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Յով. Ե. 1:

12. Ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատով  
'ի Յիսուս Քրիստոս:

13. Ամենայն, որ հաւատայ 'ի նա, մի կորիցէ,  
այլ ընկալցի զկեանս յաւիտենականս: Յով. Գ. 19:

14. Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ,  
յիս բնակեսցի և ես 'ի նմա: Յով. Զ. 57.

15. Ամենայն որ յԱստուծոյ ծնեալ է, յաղթէ  
աշխարհի, և այս է յաղթութիւն, զոր յաղթեմք  
աշխարհի՝ հաւատքն մեր: Ա. Յով. Ե. 4:

16. Գոյ Աստուած յերկինս: Բ. Մակ. ԺԵ, Յ:  
Երկինք պատմեն զփառս Աստուծոյ, և զարարածս  
ձեռաց Նորա՝ պատմէ հաստատութիւն, Սաղմ. ԺԲ. 1.  
Մի Աստուած և չայր ամենեցուն որ 'ի վերաց

ամենայնի և ընդ ամենեսին և յամենեսին 'ի մեզ:

17. Երեք են՝ որք վկացեն յերկինս չայր, Բան  
և չոփի սուրբ, և սոքա երեքինս մի են: Ա. Յով. Ե. 7:

Մկրտեցէք զնոսա յանուն չօր և Որդւոյ և չո-  
գույն Սրբոյ: Մատթ. ԻԸ, 19:

Հաւատան՝ թէ չայր յիս և Ես 'ի չայր: Ես և  
չայր մի եմք: Յով. Ժ. 30:

18. Արասցուք մարդ ըստ պատկերի մերում:  
Եկացք իջցուք և խառնակեսցուք անդ զեզուս-  
նոցա:

Ես ընդ ձեզ եմ, ասէ Տէր Ամենակալ, և Բանն,  
զոր ուխտեցի ընդ ձեզ... և չոփին իմ, որ կայ 'ի  
միջի ձերում: Անգիա, Բ. 5, 6:

19. Ողորմութեամբ Տեառն լի եղև երկիր և  
Բանիւ Տեառն երկինք հաստատեցան և չոգւով բե-  
րանոյ նորա ամենայն զօրութիւնք նոցա: Սաղմ.  
ԼԸ, 6:

20. Դա է Որդի իմ սիրելի, գմա լուարուք:  
Մատթ. ԺԷ, 5:

Գնացէք այսուհետե՝ աշակերտեցէք զամենայն  
հեթանոսս, մկրտկցէք զնոսա յանուն չօր և Որդւոյ  
և չոգւյն Սրբոյ: Մատթ. ԻԸ, 19—20:

21. Այլ Աստուած, որ մեծն է ողորմութեամբ  
վասն սիրոյն, զոր սիրեաց զմեզ, մինչեռ մեռեալք  
էաք 'ի մելս, կենդանիս արար զմեզ 'ի Յիսուս  
Քրիստոս:

Որպէս Եղամաւն ամենեքեան մեռանին, նոյն-  
պէս և Քրիստոսիւ ամենեքեան կենդանասցին:

22. Ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև  
'ի կատարած աշխարհ: Մատթ. ԻԸ, 20.

23. Ահա կոյս յղասցի և ծնցի որդի և կոչեսցեն զանուն նորա էմմանուէլ, որ թարգմանի ընդմեղ Աստուած:

Հոգին Սուրբ Եկեսցէ ՚ի քեզ և զօրովթիւն բարձրելոյն հովանի լիցի ՚ի վերաց քո: Ղուկ. Ա. 55.

24. ՚Ծնցի Որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս, զի նա քրիկեսցէ զժողովուրդ իւր ՚ի մեղաց իւրեանց: Մատթ. Ա. 21.

25. Եթէ ոչ գործեմ զգործս հօր իմոց, մի հաւատացք ինձ:

26. Իմ արքայութիւնքէ յայսմ աշխարհէ: Յով. ՓԲ, 36:

27. Քնջեաց զձեռագիր մերոյ հակառակութեան հրամանօք իւրովք, որ կայր մեզ հակոռակ, եբարձ զայն ՚ի միջոց, և բևեռեաց ընդ խաչափաց տին: Կողոս. Բ. 14:

28. Եկե պտուղ և անդրանիկ ամենայն ննջեցելոց. և ետ յոյս հաստատութեան վերստին նորոգման կենդանութեան ամենայն մարդկան: Փամագիրք:

29. Ո՛չ զնոյնս պարտէր չարչարի Քրիստոսի, և մտանել ՚ի փառս իւր: Ղուկ. ԻՒ, 26:

30. Եւ յորժամ Եկեսցէ Որդի մարդոց փառօք իւրովք և ամենայն հրեշտակք ընդ նմա, յայնժամ նստցի յաթոռ փառաց իւրոց, և ժողովեսցին առաջի նորա ամենայն ազգք... Մատթ. ԻԵ, 31, 32:

31. Բայց յորժամ Եկեսցէ մխիթարիչն, զոր ես առաքեցից ձեզ ՚ի հօրէ՝ զոգին ճշմարտութեան, որ ՚ի հօրէ Ելանէ, Նա վկացեսցէ վասն իմ: Յով. ՓԵ, 26:

32. Հոգի Աստուծոյ շրջէր ՚ի վերաց ջրոց: Ծննդ. Ա. 2.

33. Քանզի ոչ եթէ ըստ կամաց մարդկան տուաւ մարդարէլութիւն երբէք, այլ ՚ի հոգւոյն սրբոց կրեալք՝ խօսեցան մարդիկք յԱստուծոյ: Պետր. Ա. 21.

34. Եւ ահա բացան նմա երկինք, և ետես զոգին Աստուծոյ, զի իջանէր իբրև զաղաւնի և գայր ՚ի վերաց նորա և ահա ձայն երկնից, որ ասէր, դա է որդիչիմ սիրելի, ընդ որ հաճեցայ: Մատթ. Փ. 17:

35. Զքաղցեալս լոյցի բարութեամբ և զմեծատունս արձակեաց ունախն: Ղուկ. Ա. 53.

Ոյր գուցէ տացի նմա և յաւելցի և ոյրն ոչ գուցէ և զոր ունիցի բարձցի ՚ի նմանէ: Մատթ. Փ. 12:

36. Մատուցեալ էք... յԵկեղեցիս անդրանկաց գրելոց յԵրկինս և առ դատաւորն ամենեցուն Աստուած. և հոգիս արդարոց կատարելոց: Եբր. ՓԲ, 23.

37. Այսուհետեւ զօրացարուք Տերամք... և զգեցարուք զսպառազինութիւն Աստուծոյ, զի կարող լինիչիք կալ ընդունէմ հնարից սատանայի... վասն այնորիկ առէք զսպառազինութիւն Աստուծոյ, զի կարողք լինիցիք իդիմի հարկանել չարին յաւուրն չարութեան: Զ. 10—14:

38. Տուաւ ինձ ամենայն իշխանութիւն յԵրկինս և յԵրկրի, որպէս առաքեաց զիս հայր, և ես կինս և յԵրկրի, որպէս առաքեաց զիս հայր կամ զամբանայն հեթանոսս, մկրտեցէք զնոսա յանուն հօր և Որդւոյ և հոգւոյն Սրբոց, ուսուցէք նոցա պահել զամբանայն, զոր ինչ պատուիրեցի ձեզ, և ահաւասիկ զամբանայն առուրս մինչև ՚ի կատարած աշխարհի: Մատթ. ԻԲ. 19—20:

40. Առէք զհոգին սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեղս՝ թողեալ լիցի նոցա, և եթէ զուրուք ունիցիք, կալեալ լիցի: Յով. Ի, 22, 23:

41. Բաղումքս մի ամրմին եմք ՚ի Քրիստոս: Հովով. ԺԲ, 5:

42. Փրկեաց զմեղ և կոչեաց ՚ի կոչումն սուրբ: Բ. Տիմ. Ա, 9:

43. Որք միանդամ ՚ի Քրիստոս մկրտեցացք, գՔրիստոս զգեցելէք, չիք խտի՞ ոչ հրէի, և ոչ հեթանոսի... զի ամենեքեան դուք մի էք ՚ի Քրիստոս Յիսուս:

44. Այսուհետև ոչէք օտարք և պանդուխտք, այլ քաղաքացիք և ընտանիք Աստուծոյ. շինեալք ՚ի վերաց հիման առաքելոց և մարդարէից, որոյ է պլուս անկեանն Քրիստոս Յիսուս: Եփես. Բ, 19—20.

45. Եւ իբրև մկրտեցաւ Յիսուս, ել վաղվաղակի ՚ի ջրոյ անտի և ահա բացան նմա երիխնք և ետես զհոգին Աստուծոյ, զի իջանէր իբրև զաղաւնի և գայր ՚ի վերաց նորա: Մատթ. Փ, 16, 17:

46. Եւ իբրև լուան՝ մկրտեցան յանուն Յիսուսի Քրիստոսի և ՚ի դնել ՚ի վերաց նոցա Պօղոսի զձեռն, եկն հոգին սուրբ ՚ի վերաց նոցա: Գործք, ԺԹ, 5, 6:

47. Փշեաց ՚ի նոսա և ասէ. առէք հոգին սուրբ, եթէ ումեք թողուցուք զմեղս, թողեալ լիցի: Յով. Ի, 22:

48. Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, նա յիս բնակեցի, և ես ՚ի նմա: Յով. Զ, 57:

Որ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, ունի զկեանս յափտենականս և ես յարուցից զնա յառեն յետնում: Յով. Զ, 58:

49. Եհան զնոսա մինչև ՚ի Բեթանիա և ամբարձեալ զձեռս իւր օրհնեաց զնոսա: Ղուկ. ԻՊ, 49. (տես. 38, 29):

50. Եւ նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա, և բժշկել զամենայն ցաւս, և զամենայն հիւանդութիւնս: Մատթ. Փ, 1.

Եւ եղեւ հայրն Պոպկեայ ՚ի ջերմն և յախտթանցից հիւանդանալ դնել, առ որ մտեալ Պօղոս և կացեալ յաղօթս, եղ զձեռն և բժշկեաց զնա: Գործք. ԻԲ, 8:

51. Ունիմ զյոյս առ Աստուած, որում և դոքա ակն ունին, թէ յարութիւն լինելոց է արդարոց և մեղաւորաց: Գործք, ԻՊ, 15:

52. Յորժամ Յիսուս յայտնեսցի, կեանքն ձեր, յայնժամ և դուք ընդ նմա յայտնեսցիք փառօք: Կող. Գ, 4:

53. Սերմանի ապականութեամբ, յառնէ առանց ապականութեան: Ա, Կորնթ. ՓԵ, 32:

54. Քանզի մեւանիլ ոչ կարեն, զի հաւասար հրեշտակաց են և որդիք Աստուծոյ: Ղուկ. Ի, 36:

55. Յայնժամ արդարքն Տագեսցին իբրև զարեգակն յարքայութեան երկնից:

56. Գալոց է Որդի մարդոյ փառօք հօր իւրոյ հանդերձ հրեշտակօք իւրովք, և յայնժամ հատուցէ իւրաքանչիւր ըստ գործս իւր: Մատթ. ՓԶ, 27:

Յայնժամ ասիցէ թագաւորն ցայնոսիկ, որք ընդ աջմէն լիցեն՝ եկացք օրհնեալք հօր իմոյ, ժառանգեցէք զպատրաստեալն ձեզ արքայութիւն ՚ի սկզբանէ աշխարհի. ասասցէ և ցայնոսիկ, որք ընդ ահեկէն լիցեն՝ երթացք լինէն, անկնծեալք, ՚ի հուրն

յաւիտենական, որ պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա... և երթիցեն նոքա ՚ի տանջանս յաւիտենականս, և արդարքն ՚ի կեանս յաւիտենականս: Մատթ. ԻԵ, 34—46:

Եւ ասասցէ, ոչ գիտեմ զձեզ ուստի էք, ՚ի բաց կացէք ինին ամենայն մշակք անիրաւութեան, անդ եղիցի լալ և կրծել ատամաց: Ղուկ. ԺԳ. 27:

57. Ամէն ամէն ասեմ ձեզ, որ զբանն իմ լուէ և հաւատայ այսմ, որ առաքեացն զիս, ընդունի զկեանս յաւիտենականս: Յով. Ե. 24:

58. Խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և այդ ամենայն յաւելցի ձեզ: Մատթ. Զ. 33:

59. ՚Ի տաճարի նորա ամենեքեան պատացէն նմա զփառս: Սաղմ. ԻԸ, 9.

60. Մուտ ՚ի սենեակ քո, և փակեա զդուռս քո, կաց յաղօթս առ հայր քո ՚ի ծածուկ: Մատթ. Զ, 6:

61. Տեսցէն զդործս ձեր բարիս և փառաւորեսցէն զչայր ձեր՝ որ յերկինս է: Մատթ. Ե. 18:

62. Ոչ գայ արքայութիւն Աստուծոյ խտրանօք... զի ահա արքայութիւն Աստուծոյ ՚ի ներքս ՚ի ձեզ ։ Ղուկ. ԺԷ, 20:

63. Զի դու, Տէր ամենակալ, գիտես զպէտս մեր և զկարիս՝ առաւել քան զոր խնդրեմք և խմանմք: Ժամագիրք:

64. Քանզի զիտէ հայրն ձեր երկնաւոր, թէ պիտոյ է ձեզ այդ ամենայն, խնդրեցէք նախ զարքայութիւն Աստուծոյ և զարդարութիւն նորա և այդ ամենայն յաւելցի ձեզ: Մատթ. Պ. 4:

65. Եթէ թողուցուք մարդկան զանցանս նո-

ցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր զանցանս ձեր: Ապա թէ ոչ թողուցուք մարդկան զանցանս նոցա, և ոչ հայրն ձեր թողցէ զանցանս ձեր: Մատթ. Զ, 14, 15:

66. Այս է սէրն Աստուծոյ, զի զպատուիրանս նորա կատարեսցուք և պատուիրանք նորա չեն ինչ ծանունք: Յով. Ե. 3:


67. Մեք ոչ եմք ընդ օրինօք, այ ընդ շնորհօք: Յով. Զ, 14:

68. Մի համարիք եթէ եկի լուծանել զօրէնս և զմարդարէս. ոչ եկի լուծանել, այ լնուլ: Մատթ. Ե. 17:

69. Անհնազանդութեամք միոյ մարդոյ մեղաւորք բազումք եղեն: Յով. Ե. 19:

70. ՚Ի միոջէ մարդոյ մեղք յաշխարհ մտին և ՚ի մեղաց անտի մահ: Յով. Ե, 12:

71. Ծառայ, որ ոչ գիտիցէ զկամս Տեառն իւրոյ և արժանի զանի ինչ զործիցէ, արբցէ զան սակաւ: Ղուկ. ԺԲ, 48:



Ճ Ա Ճ Ի Ց Ա Ռ Ա Զ

— Աչք ամենեցուն՝ ի Փեղ, Տէր, յուսան  
և Գու տաս կերակուր նոցա ՚ի ժամու. բա-  
նաս զձեռն քո և լցուցանես զամենեսին քաղ-  
ցրութեամբ կամօք քովք:

Ճ Ա Ճ Ի Ց Յ Ե Տ Ո Յ

— Տէր Յիսուս, լցաք ՚ի բարութեանց  
քոյ: Տացուք գոհութիւն Տեառն Աստուծոյ մե-  
րոյ՝ Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ: Չլիսթիւն  
սեղանոյս անհատ և աննուազ արասցէ Քրիս-  
տոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց և լիա-  
ցոյց՝ նմա փառք յաւիտեանս. ամէն:

Ա Ռ Ա Խ Օ Տ Ե Ե Ն

— Գոհանամք զքէն, Տէր Աստուած մեր,  
որ զարթուցեր զմեզ ՚ի հանգստենէ քնոյ շնոր-  
հիւ ողորմութեան Քոյ: Զարթն զմիտս մեր ար-  
դարութեամբ առ Փեղ, Տէր Աստուած մեր, զի  
տեսցեն աչք մեր զփրկութիւն քո, եկեսցէ և  
բնակեսցի առ մեզ Աստուածութիւն քո և ողոր-  
մութիւն քո հովանի և պահապան լիցի ՚ի վե-  
րայ պաշտօնէից քոյ: Եւ զմեզ զծառալս քո  
արժանի արած ՚ի տուէ և ՚ի զիշերի և յամե-  
նայն ժամու միշտ խորհիլ ՚ի սէր պատուիրա-  
նաց քոյ և դոհանալով փառաւորել զչայր և

ԸՂՕԹՎՆԵՐ \*

Դ Ա Մ Ւ Յ Ա Ռ Ա Զ

— Ամենաբարի Աստուած, առաքենա առ  
մեզ շնորհս հոգւոյդ քո սրբոյ, զի պարզեցնցէ  
մեզ զմիտս և կազդուրեցէ զզօրութիւնս հո-  
գւոց մերոց, որպէս զի մեք ընդունելով զաւան-  
դեալ մեզ ուսմունս զարգացուք քեզ Ստեղծո-  
ղիդ մերում ՚ի փառս, ՚ի մխիթարութիւն ծնո-  
ղաց մերոց, յօգուտ եկեղեցւոյ և հայրենեաց:

Դ Ա Մ Ւ Յ Յ Ե Տ Ո Յ

— Գոհանամք զքէն, Արարիչ, զի արժա-  
նի արարեր զմեզ շնորհաց քոց, ընդունելու-  
թեան ուսմանս: Որհնեա զմեծաւորս, զծնողս  
և զուսուցիչս մեր, որք առաջնորդեն մեզ ՚ի  
գիտութիւն բարութեան, և տուր մեզ կարո-  
ղութիւն ՚ի շարունակութիւն ուսմանս այսորիկ:

\*) Այս մասում զետեղած նիւթն առաջին պա-  
տրաստական դասատան աշակերտների դասըն-  
թացքն է:

զԹրդի և զՍուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### Ե Բ Ե Կ Ո Յ Ե Ա Ն

— Հրեշտակի խաղաղութեան յանձն արա զանձինս մեր, Տէր զօրութեանց, որ եկեալ պահեսցէ զմեղ անխռովս՝ ի տուէ և ՚ի գիշերի, յարթնութեան և ՚ի հանգստեան մերում, զի դու ես, Տէր, Արարիչ լուսոյ և հաստիչ գիշերի:

### Ս Ո Ւ Ր Բ Խ Ա Զ Ի

— Պահպանեա զմեղ, Քրիստոս Աստուած մեր, ընդ հովանեաւ սուրբ և պատուական խաչի քո՝ ՚ի խաղաղութեան. փրկեա յերևելի և յանձերևոյթ իշշնամոյն. արժանաւորեա գոհութեամբ փառաւորել զինեղ ընդ Հօր և ընդ Հոգուոյն Սլբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն:

### Ս Ո Ւ Ր Բ Խ Ա Զ Ի

Սուրբ Աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մ ողորմեա մեղ:

### Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Ծ Ն Ի

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատոն զաղաշանս մեր Որդոյ քո և Աստուծոյ մերոյ:

Փրկել զմեղ ՚ի փորձութենէ և յամենայն վըտանգից մերոց:

### Յ Ա Ր Ա Խ Թ Ե Ա Ն

— Քրիստոս յարեաւ ՚ի մեռելոց, մահուամբ զմահ կոխեաց, և յարութեամբն իւրով մեղ զկեանս պարզեւաց, նմա փառք յաւիտեանս. ամէն:

### Տ Օ Ւ Յ Ե Ր

(Պատմութիւնները պէտք է անցնել պատկերների վերայ):

1. Սուրբ Կոյս Մարիամի Ծնունդը — Սեպտեմբ. 8-ին:
2. Սուրբ Կոյս Մարիամի ընծացումն տաճարին նոյեմբերի 21-ին:
3. Սուրբ Կոյս Մարիամի աւետումն — Ապրիլի 7-ին:
4. Յիսուս Քրիստոսի Ծնունդը — Յունվարի 6-ին:
5. Տեառնլոյան կամ Յիսուսի քառասնօրեայ տաճար տանելլ — Փետրվարի 14 ին:
6. Յիշնասի մկրտութիւնը — Յունվարի 1-ին:
7. Յիսուսի պայծառակերպութիւնը կամ Վարդապառ:
8. Ծաղկազարդ:
9. Աւագ Հինդշաբթի:
10. Յիսուսի խաչելութիւնը:

11. Յիսուսի թաղումն:
12. Յիսուսի Յարութիւնը — Զատիկ:
13. Համբարձումն:
14. Հոգեզպալուստ:
15. Առաջին Լուսաւորիչները — Սուրբ Թագէոս և  
Բարդուղմէոս առաքեալները:
16. Սուրբ Աստուածածնի Վերափոխումն:
17. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:
18. Խաչվերաց:

1. Մեր հաւատալիքը - Հաւատոյ հանգանակը տես	
	դասագրքի 15 եր:
2. Տէրունական ազօթք . . . . .	> 51 »
3. Տասն պատուիրաններ. . . . .	> 60 »
4. Ինն Երանութիւններ.	> 67 »

11. Յիսուսի թաղումն:
12. Յիսուսի Յարութիւնը — Զատիկ:
13. Համբարձումն:
14. Հոգեգալուստ:
15. Առաջին Լուսաւորիչները — Սուրբ Թաղէոս և  
Բարդուղիմէոս առաքեալները:
16. Սուրբ Աստուածնի Վերպիտիխումն:
17. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ:
18. Խաչվերաց:

1.	Մեր հաւատալիքը - Հաւատոյ հանգանակը տես	
		դասագրքի 15 եր.
2.	Տէրունական աղօթք . . . . .	51 *
3.	Տասն պատուիրաններ. . . . .	60 *
4.	Ինն Երանութիւններ. . . . .	67 *

1041

0028063

1041

«Ազգային գրադարան



NL0028063

